




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՐԳԵՅԻՆ, ԲԵՆԵՍԻՆԿԵՆ, ԳԻՐԳԻՏԵՆ
ԵՒ ԲԵՂԵԲԵՆ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇԻՐԱՆ ՄԻՆԵՆՆԵՅ



ՅԵՐՈՒՍԱԼԵՒԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵՆՆՑ

1868

Ստառաշենի Մարտիրոս աղա քեհաբաժի Մալաթիացի
կարապետ աղա Դեմակ Վոլչենի :
Դաշեափանեան Բակուր աղա Տիգրանակերտցի :
Քառասնամեկ ընկերութիւն :

- Կարապետ Արքեպիսկոպոս :
- Յակոբ Արքեպիսկոպոս (2 օրի) :

Տէր Յովէի աւագ քահանայ Կոստանեանց

Աղբիւրի մահտեւի Եւկոր աղա և
Գրիգորեան Աղբիւր Եֆեսոյ,
Գ. Էռստֆէլտի Աղբիւրի աղա
Աղբիւրի Արարող աղա և
Խաչատուրի մահտեւի Եւկոր աղա :

[illegible]

Քեօսէեան Սարգիս աղա Արամպէ՛րցի :

Եղիաթեան Մեթոդակոմե ազատ
Թապալտեան մեհակոմի խաչատուր ազատ
Ասրիյեան մեհակոմի Սահակ ազատ

Վարդենիսի Գրիգոր աղան :

Գեր . Առաջնորդ Մկրտիչ Վարդապետ Տիգրանյան :
Աճեմեան Միքայել աղա :

Գրուտեան մանկո՛րքի Մանուս աղա Արապկէ՛րցի ։
Գալլը՛նը Բա՛լթիկեան Գրիգոր աղա ։
Գալսեանս Գէորգ աղա ։
Գալստօ՛ւ ձեռնը Օսման աղա Բա՛մբէջի ։
Էփուսոսի եղբայր Նիկոս աղա Միլաթկէ՛րցի ։
Թիւֆէնէ՛նեան Մարտիկ աղա Բա՛մբէջի ։
Դարպիկե՛րքի Միմուս աղա Միլաթկէ՛րցի ։
Մհարեան Գալուս աղա Թիգրէ՛ր աղա՛ն ։
Եանձէրքի՛ն մանկո՛րքի Վաստէանաւորսք աղա ։
Մարտիկէ՛րքի մանկո՛րքի Կարապէտ աղա Արապկէ՛րցի ։
Սեփիւտեան Դաւաղորս Էփենո՛ր ։
Տէր Գրիգորեան մանկան Կալապետ աղա ։
Տէր Խաչատուրեան մանկան Կարգիկ աղա ։
Տէր Կարապետեան մանկան աղա Բա՛մբէջի ։
Տէր Մարգարեան մանկան Դիլիգորա աղա ։
Տէր Բալթիկեան Վարդան աղա Բա՛մբէջի ։
Տէր Սահակեան մանկան Բա՛մբէջի աղա ։
Էփրաճիստօ՛ւ Բա՛մբէ՛նեան Էփենո՛ր ։

Այո՛, Յակոբ փայտապետ տէր Աւետիքեան:

Քրժ. Բառնարտա վարդապետ անուշ,
 Գերագույնն (Բարսա աղա)
 Վարդանան Գեորգ աղա Շիրշի գեղեթի
 Գիւրգիւզան օն Գորգիւշ աղա Մաշեկեան
 իսկեմ ճերմարան մեկու, Էդուարժէն աղա Սաւոնիցի
 Ռիչարդանեան Մարտիրոս աղա Շիրազեանի բարեի
 Մանասրեան Ռաֆայէլ աղա Մաշեկեան
 Գառնիգույնեան Սարգիս աղայն Նուբ. Գալուստեան
 աշակերտեալս :

Թաշճի Սարգիս աղա Երաբկերցի :
Կենտուռած Գէորգ աղա Ենիքի :

Արժանապատիւ Միջոյիւ վարդապետ

Կարոպետ վարդապետ :
Գալթայեան մանկանի Նեմլուր օրիորդ Պօլսեյի :
Լապարով Սիմեօն աղա Զմուռնացի :
Կարոպետեան Պօղոս էֆենտի :
Նուէր իօրենեան վարժարանի :
Խաթայեան Գեորգ Պէյ :

Քիւրա օգնւեանմ մահտեաի Գ ըիցոյ աղա :

Անհամաձայն Նազիֆ Փաշայ կառավարիչ քաղաքին և
Լիլա պաշայ :

Արժանապատիւ Արթանէս զարդապետ :

9 Պէտքս փարցապետ ։
 10 Եղիանէն փարցապետ ։
 11 Էղիէ փարցապետ ։
 12 Խաչատուր փարցապետ ։
 13 Մկրտիչ փարցապետ ։
 14 Ներսէս փարցապետ ։
 15 Էդեմիտ փարցապետ ։
 16 Էստաւամտուր փարցապետ ։
 17 Փիլիպոս փարցապետ ։
 18 Իգնատիոս փարցապետ ։
 19 Խալէկ փարցապետ ։
 20 Մկերմի փարցապետ ։
 21 Բարդէս փարցապետ ։
 22 Բաշաւաղիմ փարցապետ ։

Սարգիս ազ. Բաբանդ Բաղիշեցի :
 " Գեորգ Չմբականացի
 " Գաբրիել Վանցի :
 " Մ Իսայի
 " Յարութիւն Ա. Կեօբիւնիւն Գզանցի :
 " Սահակ "

Տրքայն. Խաչատուր Բեկդեհեմյի:
Ազգայն. Ջ. Լ. Մ. N. Moore, Consul d'Angleterre.
Dr. H. Peterman Gérant du Consulat de la
Confédération de la l'Alleman du Nord à Jérusa-
lem.

Գաղղիոյ ընդհանուր Հիւպ. Մ^ր. E. de Barère, Consul Général de France.

Գաղղիոյ Էֆւպատոսարանի քարտուղար, M^r. F. Ron-
gon, Chancelier du Consulat de France.

Խաղաղության Բանդը ապա :
 Մեծ Բանդին Կարապետ ապա :
 Մեծ Խաղաղության Բաղադր Բանդը ապա (2 արհ.) :
 Ուսուցիչ Զ. Բ. Մ^Ի. André Kartzoff, Consul de Russie.
 Ուսուցիչ Զ. Բ. Մ^Ի. Louis Dodici, Consul d'Espagne.


Գ.պրանտաբեան ձեռնարկի Գ.թից որ ազա ընկնի :

ԼՍԼԱՍԼԱՍՐԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ :
ԼՍԼԱՍԼԱՍՐԶ . ԸՆԿԵ . ԳԻՆԷՐԱՅԻՆ ՍԵՄԱՆՈՂԲ
ՊԵՏԱԿԱՆ ԴԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ :

Տէր Անտոն Առաք. քահանայ Հին Նախիջևանս :
Տէր Թովմէի քահանայ Սէլիկանց :
Քերթնով ժահանգի Եղիաթար ազա :

Վառձորդ Է. Գ. Կիկոյ արժ. Յափոր վարդապետ և
Շահին Բեկեմ Գափոր արաւ :

Տէր Բաժիր քահանայ Պաշապանեան :
Լ՛գաճանե՛ան Ստեփան ազա :



353-ԱԶ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՅՈՒ 31
1868.


ԵՐԳԵՅԻՆ ԲԱՆՈՒՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԵԿԱՆ

ՏԵՐԲԵՐՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՓԻՌԻՔԵԱՆ ԵՒ ՄԻԼԿԵՐԳՈՒ ԹԵԱՅ

Քանի մի լրագրաց մէջ նամակներ
և ճառեր կը կարդանք, յորս կը պա-
րունակին Հայ և Յայն եկեղեցական
նայ սմանց Օտտական տանի այցե-
րութեան առթիւ տեղի ունեցած
անցքերը: Եւ յա ճառերուն մէջ կրկի-
նուած կը տեսնենք խնդիր մի, որ եւ-
կար դարերէն ՚ի վեր յուզուեր, հը-
նայեր և պատմաբանական վճռով ՚ի
չարս փաստակար և անկարելի իրողա-
թեանց կարգը դադուեր է: Եւ ինչ
դիրն է հայկական և յունական եկե-
ղեցեաց միութեան խնդիրը, զոր այ-
սոր տգիտութիւնը, կամ լաւ եւս ա-
սեւ թիթեւածութիւնը վերադի-
նէ:


յուզելու երեւոյթներ կը ցուցնէ
երեւակայական ցնորքներէ յափշտա-
կուելով: Հրապարակաւ կը խոստո-
վանիք, որ մարդասիրութեան սկզբ-
բունքը մեր պաշտած սկզբունքն է:
Եւ կը փափաքինք ու կ'աղօթենք որ բը-
րիստոնեայք ոչ միայն վարժին զիրար
սիրել, այլ և ուսանին բրիստոնէա-
կան երկնային պատուէրին համեմատ
թշնամիքն անգամ սիրել առանց կը-
րօնի խտրութեան: Թէ և լինին բը-
րահմականութեան և բողոքականութեան
խղճալի ապաստաններէն: Սա-
կայն երբոր հայկական և յունական
ներկայն և անցեալն քննութեանը



գիտողութեան կ'առնուէր, կը տեսնէր ցաւաւցողութեամբ, որ երկուց եկեղեցեաց միութեան խնդիրը յաւաքողները ընդհանուր մարդասիրութեան վսեմ գաղտնարով վնն վառուած, այլ մասնաւոր և աշխարհային ակնկալութիւններով, չորս աչք չուներ սէրը այն տեղ տեսնելու, ուր որ է և ուր որ կը խորտուլանի բրիտանիէութիւնը և մարդկութեան յաւաքողութեամբ սերունդը: չորս երկուց եկեղեցեաց միութիւն կ'աղաղակեն, բայց միութիւնը իր վսեմ և ընդարձակ սահմանին մէջ նկատելու կարողութիւն չունին: Կարճ խօսիք, միաբարութեան նախանձախնդիրները Բրիտանի ասելով Բրիտանիան կը հասկընան, և այս թիւր հասկացողութիւնն է, որ ի սկզբանէ անտի տեղի տուած է մեծամեծ խռովութեանց երկուց ազգաց մէջ:

Նորոր այն ամեն գիտութիւնները, վէճերը և տաղնապները մեր աչքի առջեւ կը ներկայացընենք, զորս յունական եկեղեցւոյ միութիւն քարոզող դաւանները յարուցեր են Հայաստանեայց եկեղեցւոյ դէմ: Երբոր այն ամէն վնասները կը պատկերացընենք մեզ զորս Յոյն հատուցած են Հայոց ազգին, իրենց երազած միութիւնը մերժուելուն պատճառաւ, կը տականք, կը զարհուրինք և միանգամայն կը սփալուինք ասել, որ եթէ եկեղեցական պատմութեան մէջ քրիստոնէութեան նախատինք բերող դէպքեր կան, նոցա առաջինն կարէ համարուիլ Յունաց կողմէն միութեան խնդրոյն առթիւ Հայոց ազգին հասած դարաւոր վնասները: չորս այնչափ ահաւելի են եկեղեցական պատմութեան մէջ որչափ հաւատաւորներու (Էնիքիսիսի) անտի-քրիստոնէական դէպքերը: Բայց մի թէ քր-

իստոնէական անմիութեան առթիւ կատարուած են այս սոսկալի իրողութիւնները: Վէճ երբեք, այլ ծիսաբանական անմիակերպութեան: Վիժէքրիստոնէական միութիւն էր Յունաց պահանջածը: Վէճ երբեք, այլ ծիսական միակերպութիւն: Վերաւսածներու ճշմարտութիւնը նոյն իսկ երկար դարերով յուզուած վէճերէն յայտնի է, ինչպէս են Սուրբ Լստուածք խաչարարի ասելը, անոյր և անխոր պատարագելը, Վրիստոսի բնութեան և ծննդեան տօնի կատարման խնդիրներն և այլ այսպիսի խնդիրներ, զորս Յոյնք կը ջանային իրենցին հետ համակերպել, երբեմն հալածանքներով և երբեմն գաղտնի հրապարակներով: Բայց ինչէն էր, որ երբեք չըյաջողեցան իրենց պահանջման մէջ: Վրովհետեւ ապօրինի էր, որովհետեւ ինչպէս անհատ մարդիկ, նոյնպէս և իւրաքանչիւր ազգ և եկեղեցի իր սեպհական կոչումն ունի, իր առանձին տիպն ու անձնաւորութիւնը: Վր կ'ասէ՝ թէ ես իմ ինքնուրոյն եւութիւնս կարող եմ ուրիշ հետ փոխարինել, կը սխալի, և ով որ բռնութեամբ կը ձգնի ուրիշ գոյութիւնը իրեն գրաւել, մարդապաշտ է և ազգապաշտ: Հետեւապէս այն եկեղեցին, որ կը ջանայ միայն եկեղեցի լինել հետ միակերպել, աններողամիտ է և հալածատէր: Նոյն տերութիւնը կամ ազգը, որ կը հետամտէ միայն ազգութիւն իրեն մէջ խորասուզել և համակերպել, բռնակալ է և թշնամի անտուածութեան և բնութեան: Վր սրն զի իւրաքանչիւր ազգ և լեզու իրեն ընդհանուր մարդկային կոչման հետ ունի և իւր սեպհական ազգային կոչումն իւր Լրարապետէն ստացած, Լսոյ յայտնի է իւրաքանչիւր ազգի որիշ բնաւորութենէն, քննադրու-



թեւեւ կենցաղէն և այլ յատկա-
նիշներէն : Լսողաճուծեան և բնու-
թեան օրէիքը միակերպութիւնը չէ :
այլ անհատական և տղային իրա-
ւանց հաւասարութիւն՝ քաղաքակ-
նութեան մէջ, մարդասիրական պար-
տուց կատարումն՝ մարդկութեան և
քրիստոնէութեան մէջ, ճշմարտու-
թիւն՝ իմացականութեան մէջ, և լու-
սաւորութիւն՝ մարդկային կոչման և
վախճանին մէջ : Կախմբ ասել որ
մարդկային միութիւնը ներքին է և
հոգեւոր և ոչ արտաքին և մարմնա-
ւոր, այսպէս է և իւրաքանչիւր կրօնա-
կան միաբանութեանց կամ եկեղե-
ցեոց միութիւնը : Կայ քրիստոնէա-
կան ընդհանուր եկեղեցի ներքին և
հոգեւոր միութեամբ ամենայն ճշ-
մարիտ հաւատագրաց, փան և մառ-
նաւոր եկեղեցիներ ըստ ազգի,
ըստ տեղւոյ և ըստ առանձին ծխից և
արարողութեանց : Բնդհանուր եկե-
ղեցւոյ սկիզբը աշխարհի սկզբան հետ
կապուած է, սրուն անդամք են Եւ-
հայեայն, Սարգսիւք և ամեն ճշմարիտ
քրիստոնեայք առանց խարութեան
ազգի և լեզուի, ինչպէս կը հաստա-
տեն Սուրբ Գրքերը և Լեւտարանի
հոգւոյն քաջածանօթ եկեղեցական
Հայրերը, որոց մէջէն բաւական կը
համարինք մեր Սարգիս Դորհալոյ գե-
ղեցիկ խօսքը առաջ բերել. « Ըսմե-
նայն ազգաց և լեզուաց, որք աշա-
կերտեցան Լեւտարանին և ի վէմն
Քրիստոս հաւատովք մերձեցան՝ յա-
մենեցունց մի տաճար հոգեւոր և մի
եկեղեցի շինեցաւ » : Սասնաւոր կամ
ազգային եկեղեցեաց ճշմարիտ հոգին
ամենեւին քնդգէմ չէ այս ընդհանուր
հոգեւոր միութեան, երբոր իրենց
սկզբունքը մարդասիրութիւնն է և
իրենց պաշտօնը՝ հոգւով և ճշմար-
տութեամբ երկրպագութիւնը : Յի-

րիպոնէից քարոզածն եւս այս հո-
գեւոր միութիւնն պէտք է որ լինի և
ոչ թէ արտաքին միակերպութիւնը :
Վժբադաբար Յունաց եկեղեցին
երբէք այս ընթացքը չէ բռներ Հա-
յոց նկատմամբ, այլ միշտ՝ միութիւն
ստեղծ միակերպութիւն հասկացեր է,
և այսօր տակաւին նոյն ընթացից մէջ
կը տեսնենք : Եթէ այսպէս չըլնէր,
ներկոյ միարարութեան քարոզիչները
արդէն պիտի համկնային որ միութիւ-
նը արտաքին չէ և հետամանելու ան-
գամ կարօտութիւն չըկայ, ըստ ո-
րում քրիստոնէական ընդհանուր մի-
ութիւնը արտաքին պայմաններէ կամ
ժողովական կանոններէ կախուած չէ,
այլ քրիստոնէական ճշմարիտ և լու-
սաւոր հասկացողութենէ : Եւս եկե-
ղեցին որ իրմէն արտաքոյ ճշմարտու-
թիւն և փրկութիւն ընդունիր, այն
եկեղեցին որ ուրիշ ազգային եկեղե-
ցիները կը հալածէ և հերետիկոս ու
հերձուածող կ'անուանէ. նա քրիս-
տոնէական եկեղեցւոյ գործ չըգոր-
ծէր, այլ մոլեկրօնութեան : Եւս ե-
կեղեցին որ ուրիշ դաւանութիւնները
կը բռնաբարէ, Լեւտարանի հոգւոյն
դէմ կը մեղանչէ. վասն զի եկեղեցւոյ
իրական պարծանքը դաւանաբանական
վիճաբանութեանց մէջ չէ, այլ իւր
կոչումն գործովք և արդեամբք կո-
տարելու մէջ :

Ճշմարիտ եկեղեցւոյ կոչումն է,
մէկ նշանաւոր հեղինակի ասածին պէս.
« Սարգը առաջնորդել ի բարին եւ
մարդկութեան մէջէն դեւերը հալա-
ծել : Եւս եկեղեցի, որ դեւեր կը հա-
լածէ և մարդկութեան միտքը սիրտը
և կամքը կը սրբէ, Քրիստոսի հոգին
կը ժառանգէ » : Թող այս հոգւով վա-
րուին եկեղեցիները : Թող Հայ, Յոյն,
Հռովմէական եւ առհասարակ ամեն
քրիստոնեայ միաբանութիւններ աշ-

խտօնն մարդկութիւնը սրբել, ամենէն առաջ իրենց մերձաւոր գաւախներէն սխտըվ իսկ ծխական կողմանէ թող իւրաքանչիւր որ յարգէ իւր ծէսը, իւր ազգային ինքնուրոյնութիւնը եւ սեպհականութիւնը, վասն զի միութիւնը սիրոյ և շնորհամտութեան մէջ է եւ ոչ թէ արտաքին միակերպութեան, թող դադարին միարարութեան թեթեւամիտ եւ մղեռանդ պաշտօնեայքը և ի ի նան որ միակերպութիւնը միութիւն չէ, այլ աշխատութիւն ։ Թող ձեռք քաշեն երկուց եկեղեցեաց միութեան գաժան խրեղիւրդ յազգէլէն, որ երկար դարերով Երեւան հեղեղներու եւ երկրի աւերանաց պատճառ դարձած է ։ Ինչ ա մեթալի բուն է, որ ներկայ դարուս լուսաւոր գաւախները խզի աղատութիւն կը քարոզեն, իսկ Պօլսոյ յունական օրագրի մը խմբագիրները, առ հայ միարար մի ուղղած նամակին մէջ, տա հաւին՝ կը բացագանչեն աղայական թեթեւամտութեամբ ։ « Այն, երբ պիտի միանան հայկական և յունական եկեղեցիները, ան, ինչուն կ'ուշանայ այժմ միութիւնը ոչ ։ Բայց ինչ քան ա մեթալիէ մանուանդ, երբ որ մեր մէջն ունանք մի կողմէն մեր հոռովական և բողոքական ազգակիցները շարաշար կը հալածեն, և միւս կողմէն իրենց շնորհական յափշտակութեան մէջ միութիւն կը քարոզեն յունական եկեղեցւոյ հետ ։

Եւսօր Օսմանեան բարեխնամ Տէրութիւնը Յունաց եւ Հայոց աչաց առջեւ, առանց կրօնական խորութեան, մահմետական և ոչ-մահմետական ազգաց մէջ հաւասար քաղաքացիութեան սկզբունքը կը գործադրէ, միութիւնը մարդկութեան եւ մարդասիրութեան մէջ կը դառնան իսկ Յունաց և Հայոց նոր միարարները տակաւին չեն կարող,

առանց եկեղեցեաց միակերպութեան, միութեան սկզբունքը ըմբռնել և տա հաւին միջնադարեան ժանգոտած մրուքերով տոգորուած՝ կ'աղաղակեն բաշխել և դրով, « Ինչուն կ'ուշանայ միութիւնը ոչ ։ Ինչ թշուառ ճակատագիր ։ Ազգեր կը դաշնակցին, ազգեր միասին կը գործեն, իւրաքանչիւրն իր դաւաթեանը պատկառ կալով, իսկ Հայոց և Յունաց մէջ երբ որ խնդիր սկսոյ և քրիստոնէութեան կը գայ, իսկոյն երկուց եկեղեցեաց միակերպութեան առարկան կը բացուի ։ Վաղաքական և մերձաւորական այցելութիւններն անգամ այս գոթազգ առարկան իրենց խօսակցութեանց նիւթ կ'ընտրեն, ինչպէս կը հաւաստեն մեր ասածները Օստիական տանի այցելութեան առթիւ եղած բանախօսութիւնները ։ Ինչ այլանդակութիւն, Հայ և Յոյն եկեղեցականները փոխանակ առնելու մէջ այցելութիւններ կատարելու եկեղեցեաց մէջ կը կատարեն, և քաղաքավարական այցելութեան անգամ եկեղեցական ծխակատարութեան կերպարանք կը տան ։

Երկար դարերէն ի վեր Լըուսաղէմի Հայ և Յոյն միաբանութիւնքը իրարու այցելութեան կ'երթան և այս վերջին տարիներս խիստ մտերմական յարաբերութեամբ, սակայն Պատրիարքարանայ մէջ կը կատարեն նոյն անսակցութիւնը, և ոչ երբէք եկեղեցեաց ։ Ինչէն է որ Պօլսոյ մէջ քաղաքականութիւնը եկեղեցւոյ մէջ կը մաւժանեն, եթէ ոչ աշխատակութեան և թեթեւամտութեան ։ Միարարութեան պաշտօնեաներէն ամանք, անցեալ տարիները, Հայաստանեայց եկեղեցւոյն բարոյովն անձանթ եկեղեցական իրաւասութեան խնդիր մի երեւան հանեցին, իրենց եղբարց և դասակաց մէջ բաժանման պատ մի բա

չէլ ջանալով, այսօր ինչէ՞ն է որ յա-
նական միութեան քարոզ կրհանդիսա-
նան և ընդհանուր ազգի անունով կը
խօսին, մինչդեռ ազգայնութեան նը-
կատմամբ և եկեղեցական ընդհանուր
խնդրոց վերաբերութեամբ՝ իրենք այն-
չափ միայն իրաւունք ունին, որչափ
ազգի յետին կոչկալար՝ զուտակը : Փո-
խանակ Վգբը ինքնազորութեան գա-
ղափարի մէջ վարժեալու եւ այն թիւ-
կարծիքները սրբելու ազգայնոց մէջէն,
որով ոմանք տգիտաբար կը կարծեն
թէ այս ինչ կամ այն ինչ տէրութեան
դաւանանքը ընդունելով միայն կարող
են հովանաւ որու թիւ և բարօրութիւն
գտնել : Փոխանակ Վգբի անջատեալ
եւ բաժանման միտքերով յուզուած
անդամները միայնելու եւ ազգային
ամբողջութիւնը պահպանել ջանալու,
նոր երկպառակութիւն դաւաճ կը բռնան
և թեթեւամտաբար եկեղեցական մի-
ակերպութիւն կը քարոզեն յունակա-
նին հետ : Վերջապէս, փոխանակ Վգ-
բին հասկացնելու՝ որ իւր փրկութիւնը
և կորուստը ուղղակի իւր ձեռքն է .
յիսորական երազներ կը տեսնեն օտա-
րաց հետ միակերպուելու վնասակար
հրապոյցներուն մէջ : Վերապատուելի
միաբարները իրենք ըստ ամենայնի ա-
զատ են միակերպելու որ և իցէ ազգի
և եկեղեցւոյ հետ առանց աչքակա-
պութեան, բայց իրենց միտքերը ժողո-
վուրդի մէջ սերմանելու համար՝ խա-
րաղանաւ քեճծուելու արժանի են : Բա-
ւական էր, ինչ որ մինչեւ յայսօր թե-
թեւամտութիւնը և շահամուտութիւնը
ամեն բան գիւրազնի վաճառեցին,
այն է ազգային թափ և գաւառան,
ազգային իրաւունք եւ քաղաքական
ամբողջութիւն, ոյժով եթէ անպառ-
կառաբար եկեղեցւոյ ինքնուրոյնու-
թիւնը վտանգելու փորձ կը փորձեն .
թող իմացած բլան որ իրենց ձեռքը

չէ : Հայ ազգը քաջ գիտէ միաբարու-
թեան արբանեակ Վգբերու և Վիկոյե-
ներու անուանները գլխիվայր գործմել
իւր եկեղեցական պատմութեան մէջ
ի նշան յաւիտեական անարգանաց :
Եթէ հայկական և յունական եկեղե-
ցեաց միակերպութեան մէջ երջան-
կութիւն կ'երազեն ողորմելի միաբար-
ները՝ թող Հայ-Հռոմէներու վնասկը
նկատեն, որոնք երկար դարերէն ի վեր
միացած են յունական եկեղեցւոյն հետ
և թող այն իմաստակաւ թեւէն դադ-
րին, որով կը կարծեն թէ Հայաստա-
նեաց եկեղեցւոյ աւղղադաւանութիւնը
(Հռոմաց վնասհատութեանէն կտա-
նալ է, եթէ հերետիկոսական ան-
ուանեն) հերետիկոսական կ'ըլլայ եւ
եթէ ուղղափառ ասեն և իրենց եկե-
ղեցւոյն քյոր անուանեն, ուղղափառ
կ'ըլլայ : Հայոց եկեղեցւոյ ուղղադա-
ւանութեան արմատը իւր մէջն է,
իւր կրած մարտիրոսական տառապա-
նաց մէջ, իւր այն աշխարհաբարոզ վը-
կայութեան մէջ, որով վիպեր է բրիտ-
աննական Ճշմարտութիւնը Վրեւել-
քի հեթանոս ազգաց մէջ եւ նահա-
տակաց արեամբ կնքեր է իւր վիպու-
թիւնը :

Իւր ուղղադաւանութեան վկայ-
ութիւնը իւր պատմութիւնն է և ոչ
թէ օտարաց կարծիքները և միեռան-
գութեան թշնամանքները : Եթէ յու-
նական երիտասարդութիւնը կուզէ
այսօր իւր նախահարց ատելութեան
յանցանքները քաշել և Հայոց ազգը
և եկեղեցին սիրել, առանց միակե-
րպութեան կամ միութեան խնդիրը
յուզելու եւս՝ կարող է այդ առաքի-
նութիւնը գործել, վասն զի ինչպէս
առաջ ասացինք, երկուց եկեղեցեաց
անմիակերպութիւնը երբէք չէ կարող
քրիստոնեական սիրոյն արգելք դա-
նալ, ինչպէս որ յունական և հայկա-

կան ազգային առանձնութիւններ չեն կարող արդեւք դառնալ մէկմէկ եղբայր ճանաչելու բոտ մարդկութեան : Սենք այնպէս գիտենք , որ ինչպէս Հայը Յայն չէ , նոյնպէս և ոչ (Յայնը) Հայ . բայց երկուքն եւս մարդ են , և բոտ մարդկութեան եղբայր :

Սենք գիտեմք նմանապէս , որ ինչպէս հայկական եկեղեցին՝ յուշական չէ , նոյնպէս և ոչ յունականը՝ հայկական , բայց երկուքն եւս են քրիստոնէական : Եթէ մարդկութեան և քրիստոնէութեան գաղափարը այն չափ հզօր չէ երկուց ազգաց մէջ , որ կարենան զիրար սիրել , միութիւն կամ միակերպութիւն ազդեցկեւր լիկ օգտաբաղին հնչիւն ու կատարեալ աշխատութիւն է , և հետեւապէս այդ ազդեցկեւրը բարձրացը նոզները երկուց ազգաց բարեկամ թշնամիներն են : Սենք չենք հաւատար , որ հայկական և յունական երկուստարդութիւնը տակաւին այն աստիճանի տգիտութե մէջ լինի , որ լուսաւոր աշխարհի առջեւ՝ տասն և ինեւրորդ դարու մէջ , մինչեւ յամեն ուստէք խղճի ազատութեան ձայներ կը բարձրանան , ուրախութեամբ լսէ և կեղեցեաց միակերպութեան խնդրոյն վրայօք եղած տաղտուկ ճողմարանութիւնները :

Սասն զի միակերպութեան խնդրը այն գայթակղութեան քարն է , որուն վրայ խորսակուեցան բռնակալաց սրերը , և նենք քաղաքականութե գաղտնի խթանները , ուստի ինչպէս լուսաւոր ազգաց համար , նոյնպէս և մեզ համար այդ խնդիրը պէտք է յաւիտեան մահացած խնդիրներուն կարգը համարուի : Սասն զի այդ խնդրոյ յուզումն հազար չորս հարիւր տարի շարունակ խուլութեան և ատելութե պատճառ եղած է և ոչ երբեք քիտղ

և խաղաղութեան նոյնը կարող է այստահիլ և այսօր , եթէ թեթեւամտութիւնը վերստին յուզէ : Ուստի և վրա տահութիւն կ'ասենք , որ մինչեւ երկու ազգերը չուսանին առանց միութեան խնդիրը յարուցանելու՝ զիրար սիրել , միշտ պիտի առեն : Սինչեւ չուսանին երկուց եկեղեցեաց ինքնուրոյնութիւնը փոխադարձ յարգել , միշտ պիտի զիբար բռնաբարեն , և ինչ տեղ բռնաբարութիւն կոյ , այն տեղ խղճի ազատութիւն չը կոյ , և ինչ տեղ խղճի ազատութիւն չը կոյ , այն տեղ չը կոյ քրիստոնէական ճշմարիտ սէր : Ուրեմն թող երկու ազգն եւս սէր քարոզեն և ազատութիւն խղճի , որոնք հիմն են քրիստոնէութեան : Թող մանաւանդ չը թոյլատրեն քանի մի թեթեւամտներու՝ որբապան տաճարները նուրաձեւ այցելութեան թաղոյ շինելու և եկեղեցեաց մեծփոյնքութիւնը՝ նաեւ մայրերը , Եւրոպեական համար առաջնորդարաններ կան և եկեղեցական տներ , այն տեղ կարող են կատարուիլ ամեն տեսակցութիւնք և անախտութեանց շնորհաւորութիւնք :

Ի պէրջոյ մեր եկեղեցական վարչութեան և բոլոր բարեմիտ հայութեան մտադրութիւնը կը հրաւիրեմք հետեւեալ կէտին վրայ : Եկեղեցական վարչութիւնը պարտաւոր է հսկել , որպէս զի տկարամիտ պաշտօնեայք ոմանք տեղի չը տան եկեղեցեաց մէջ ինքնահաճ նորոձեւութեանց , որոնք անհոգութենէ՝ յետ ժամանակաց կարող են ծխական արարողութեանց կարգն անցնիլ : Երդէն մեր եղբայրներէն ոմանք իբրեւ թէ յունական և հուովեւական նորամուտ ծէսեր նմարելով , դժբաղդաբար մեր մայրենի եկեղեցիէն բաժնուելու և լուսաւորական ըկկերակիան անուամբ նոր եկեղեցի կազմելու ճըգանց վրայ են : Սչ ապրեմն Օտտիւ

պատ այցելութեան նորաձեւ արարողութիւնքը և այլ նոյնպիսի եկամուտ պարտութիւնք՝ ևս առաւել կարող են տեղի տալ եկեղեցւոյ զաւակաց երկու պառակտութեանը, ինչ ապաքէն եկեղեցական վարչութիւն պարտքն է զգուշացնել այս թեթեւամտութիւնները, որոնցմէ բաց ի վնասէն օգուտ չկայ:

Ընդարեւ մենք աններսողամտութիւն կ'աւտենք ու բայց անտարբերութիւնն ու անհոգութիւնն եւս չենք կարող ցովել, այլ կը դատապարտենք: Հետեւապէս հսկողութեան կը հրաւիրենք մեր եկեղեցական վարչութիւնը և արթնութեան, որ իւրաքանչիւր վարչութեան պարտուց անթերի կատարման գլխաւոր պայմանն է:

ԿԱՐՃ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՄԸ

Պարերէ ի վեր փորձուած ճշմարտութիւն մ'է որ բազմութեան կատարելիք գործը առանձին մէկը չէ կարող կատարել, շատերու միութեւք ըլլալիք գործ մը երբ մէկու մը վրայ կը մնայ, հարկաւ նոյն գործը ապօրինաւոր և պակաս կ'ըլլայ կամ վնասակար հետեւութիւն կ'ունենայ:

Եթէ ընտանեաց մէջ տանտէրը, տանտիկինը, զաւակները և սպասուորները իրենց պատկանածը չի կատարեն, և թողուն որ ամեն բան մէկուն վերայ մնայ և կամ մէկը միայն իւր վերայ կեդրոնացունէ, թող որ այն տան մատակարարութիւնը ըստ օրինի ըլլար և շատ մը թերութիւններ ու պարտաւորութիւններ, տեղի կ'ունենան, այլ նաեւ օր աւուր մեծ և փոքրը վնասներ բազմապատկուելով տան կործանումն անհրաժեշտ կ'ըլլայ: Ինչպէս որ տուն մը՝ նոյնպէս ամեն ընկերական միութիւններ կամ պաշտօնական տուններ: Եթէ իրենց ամբողջ

ընթացքը պահել կ'ուզեն՝ կը պարտաւորին մասերը միմեանց ձեռնադրելու, իւրաքանչիւրն իր պարտքն ու պաշտօնը կատարելով:

Չենք գիտեր ինչ աստիճանի անմարտութիւն է որդւայ մը ըրածը երբ իւր հօրը տունը իւր իւր սեփականութիւն չի նկատէ, և հոն գտնուողներուն մէկուն կամ նոյն իսկ հօրը դէմ դառնալով կամ անոնց վերայ մասնաւոր դժկամակութիւն մը ունենալով գործել կը հրաժարի, պարտքը չկատարէր և իրաւունքն չի հրաժարի, առանց խորհելու որ տան կործանման վնասը բուն իրեն կը վերաբերի, քան զի հայրը կ'երթան և որդիք կը յաջորդեն անոնց: Իսկ չենք կարող ուրաշալ նաեւ որ շատ անգամ այս չէ գործութեան և անկէ հետեւելիք վնասին առիթ կուտան նոյն իսկ ընկերութեան գլխաւոր անդամք, վասն զի չեն ճանչնար և չեն յարգեր իրենց ձեռաց տակ եղողներուն յատկութիւնն ու աշխատութիւնը: Ինչպէս ուրիշ անգամ ըսինք՝ այս անգամ գարձեալ առիթ ունիմք ըսելու որ յատկութեան մը կամ աշխատութեան մը յարգը ճանչնալ և զայն վարձատրելը, (գոնէ շնորհակալութեամբ), յառաջ մղելու և կատարելագործելու առիթ է. բայց անոր կարելի թերութիւնները և անխորձութեամբ յառաջ եկած սխալները և նարգանջք և անպատուութեամբ երեսը զարնելով գործոյն արժէք չի տալով վնասութիւն և լքումն կը պատճառէ, ուրկէ կը ծնանի անգործութիւն՝ հետեւաբար և գործերու իսպառ անկարգութիւն. եթէ անխորձ պաշտօնեայ մը ամենակատար գործ պահանջ ջուրի, կը նշանակէ թէ բնաւ կատարեալ գործ չպիտի գտնուի. քանզի եթէ մէկ անվարձ համբակը առանց վարձեցընելու մերժենք, ուրիշ մ'ալ

նոյնպէս անվարժ և անխորձ ախտի գտնենք, և միշտ փոփոխելով միշտ համբակներ պիտի ունենանք, և որ ժամանակ որ պաշտօնէի փոփոխութիւններ կ'ընենք առանց զանոնք ի կատարելութիւն մտադրու, միշտ անփորձ և անվարժ պաշտօնեայնք պիտի գտնենք:

Այսպիսի բնութենական և ընկերական միութեանց մէջ պաշտօնէի մը փոփոխութեան պատճառ՝ չէ թէ իւր անվարժութիւնն ըլլալու է, այլ իւր նենգութիւնն ու խարդախութիւնը. քոնի որ առանց այս պատճառները նկատելու լոկ անփորձութեանը համար կը մերժուին, կ'անարգուին և առանց վարձատրութեան ու շնորհակալութեան երեսէ կը ձգուին, բնաւ գործերու արդիւնաւորութիւն և գործակալներու կատարելութիւն չի պիտի գտնուի. եթէ բնական յատկութեան մը կատարելութեամբ մէկը գործի մը յարմարութիւն ունենայ, այսպէս բացառութիւն է, թէ և միշտ պակտաւոր կ'ըլլայնաւազ տարբերութեամբ:

Իլերմն, այսպիսի միութեան մը գլխաւոր անդամները խոհականութեան իրենց ստորագրեալներուն յատկութիւնները ճանչնալով ամեն մէկը իւր յատկութեան համեմատ գործերու վերայ կարգելու են և հոն շարունակել տալու են. որպէս զի փորձառութեամբ կատարելագործուին. ինչպէս որունք մը յաճախակի տեղէ տեղ փոխադրուելով արմատ չի բռնէր, այնպէս ալ մարդ մը գործէ ի գործ պաշտօնէ ի պաշտօն փոխուելով միշտ ամենաւն մէջն ալ թերի կը մնայ. այս պատճառաւ իրաւունք չեն ունենար գլխաւորը գանգատելու թէ ձեռքեր նուն տակ յարմար պաշտօնեայնք չունին, որպէս զի գործերը անշփոթ կա-

տարուին: Այս գործառնարց հիմա մամբ խօսելով պայտէս է. սակայն գլխաւորներէն զատ միւս անդամներն ալ այսպիսի պարտաւորութիւններէ ազատ չեն, այսինքն՝ եթէ գործը ընկերութեան մ'է, որուն վնասն ու շահը ամենուն կը վերաբերի, այն ատեն իւրաքանչիւր անդամ կը պարտաւորի իւր պաշտօնը ճշդիւ կատարել իւր իւր անձնական գործը, առանց ուրիշի հետ ունեցած խէթը կամ ատելութիւնը նկատելու: Կատարելալ անմեղութիւն է ասանկ պարագայներու մէջ մասնաւոր կիրքեր յագեցունելու համար ընդհանուրին շահուն և պատուոյն վնասել, որով իւրն ալ մէկ տեղ կը վնասուի:

Իբրեւ մարդ նկատելով կ'ըսեմք. երբ մարդիկ կը միանան խոստմամբ յօգուտ հասարակաց աշխատիլ երբ գործերը կը ռաժնուին և կը յանձնուին անդամներուն, այնուհետեւ պէտք չէ մասնաւոր առիթներ վրիճել թուլնէ և կասեցունէ, այն ինչ մէկուն ետ քաշուիլ միւս ամեն անդամներուն ալ վնասակար է և հետեւեալ գործոյն բուն նպատակին. ասանկով չէ թէ մասնաւորէն վրժ լուծած կ'ըլլանք, այլ անմեղներու չարիք հասուցած և շարագործ մը եղած կ'ըլլանք: Եւստի եթէ ուզենք, մեր գործը կ'ստարելով հանդերձ՝ այն մասնաւորին հետ ալ իր աւախէ կրնանք ըլլալ. պարտքերնիս կատարած ըլլալով ալ բազմութիւն մը վնասէ և կործանու մէ ազատած և մեր անձը անբասիր կ'ոյցուցած կ'ըլլանք:

Խօսքերնիս բոլորովին չենք մասնաւորեր, որպէս զի թէ կիրքերը չի գրգռենք և թէ գուցէ յօգուածնիս ամեն աստիճանի ընկերութեան պատկանի: Եւստի աղաչելով հանդերձ կը խնդրենք՝ որ վերադրեալ խօսքերուն

ձևարձուութեան հասնել եղող բարե-
օրիտ անձինք երբ իրենց վերայ կը
նշմարեն սոյն թերութիւնները, շու-
տով սթափին և ուղղուին յօգուտ հաւ-
ասարակութեան, ՚ի փառս իրենց, և ՚ի
միտթարութիւն մեզ. այն ատեն պի-
տի տեսնան թէ ի՞նչ քաղաքութիւն
կայ այս կերպին մէջ և համեմատելով
պիտի գտնեն իրենց բռնած առաջին
կերպին մէջ եղած դառնութիւնը և
սրտի անհանգիստ յուզումը: Աստուած
տաք որ այս մեր համառօտ խորհրդա-
ծութիւնն իւր բուն նպատակին ժա-
մանելով՝ յուսացուած արդիւնքը հաւ-
ցունէր, որով դուշտկուած չարեաց
առաջն անուշտկելով մօտալուտ և մեծ
փնտ մը յետս կ'ընկրկէր:

Ա Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Վրիստոնէական զգաստութիւնը
պէտք է որ նսնոնաւորէ և ուղղէ մեր
աշխատանքը, փսն զի՝ աշխատանքը ե-
թէ առ չարն գործադրուի՝ կարող է
դառնալ մարդուս համար դատապար-
տութեան և անկման պատճառ: Աշ-
խատիրը սուրբ և փեմ պարտաւորու-
թիւն է մարդու համար: Այս ճմար-
տութիւնը սրբապետ կերեւել՝ յախ-
մարդուն որուած ընդունակութենէն,
հոգւոյ ու մարմնոյ գործունէութե-
նէն, մեր բնական ձգտողութիւններէն
քանի մի աշխատանաց համար, մեր մը-
տաց և յիշողութեան օրէնքներէն և
այլն: Այս ընդունակութիւնները կը
թմբին և կ'ոյնչանան՝ եթէ չը գործադ-
րենք, և ընդհակառակն՝ կը բացուին և
կը զօրանան երբս գործադրենք: Արի-
քորդ՝ կ'երեւի մարդու կենաց պիտոյք
ներէն: Արկիրը մեզ չը կերպրէր՝ ե-
թէ չը մշակենք: Այն պիտոյքները և
ճաշակները բազմապետակ են և աւելի
բազմապատիկ քան ուրիշ կենդանեա-

յր: Այնք ենթարկուած ենք բազմա-
թիւ պատահմանց և չենք կարող ապա-
հովել և պաշտպանել մեր կարողու-
թիւնը, եթէ ոչ աշխատութեամբ և
խմաստուն կառավարութեամբ, որ կը
պահանջէ արթնութիւն և յարաւոր-
ւութիւն, յորբոք՝ կ'երեւի այս պայ-
մանէն, որ աշխատանքը Աստուծմէ
տրուած է մարդուն իբր պարտաւո-
րութիւն, փսն զի՝ մարդը ծնանելով
հասարակութեան մէջ՝ պարտաւոր-
ուած է գգալ և իմանալ, որ մարդկա-
յին ընկերականութիւնը միայն կարող
է երջանիկ լինիլ բոլոր անդամոց աշխա-
տասիրութեամբ, և այս ճանապարհով
միայն կարեն լրանալ մեր բաղմաթիւ
պիտոյքները: Այնք պարտական ենք
օգնել հասարակութեանը մեր տաղան-
դով, մեր լուսաւորութեամբ, մեր
հմտութեամբ և զօրութեամբ, ինչպէս
ուրիշներն եւս կարեն օգնել նիւթա-
կան աշխատութեա բ: Այս ճանա-
պարհով հասարակութեան իւրաքան-
չիւր անդամը կը պահպանուի, կրնա-
նի, կը սնդուի, կը պաշտպանուի և
նախախնամութեան բարեք կը վայելէ:
Չորրորդ՝ Աստուած պարզ կը յայտնէ
մեզ իւր կամքը այս խօսքով՝ «Եւ եառ-
Տէր Աստուած զմարդն զոր արար և
եդ փն ՚ի գրութիւն փափուլութեան,
գործել զնա և պահել»: Ծն. Բ 15:
Առաջին մարդը իւր անհնազանդու-
թեամբ հեռացնելով իւր կամքը Աս-
տուծոյ կամքէն՝ ինքն եւս հեռացաւ
Աստուծմէ և ՚ի պատիժ իւր անհա-
ղանդութեանը ենթարկուեցաւ ամե-
նածանր աշխատանաց և ընկալաւ այս
վիժութիւն: Վրտամբք երեսաց քոց կե-
րկցես զհայ քոյ ո: Ծն. Գ 19: Զառ-
նաբանեաց պատուիրանաց չորրորդը կը
հրամայէ մեզ, «Օ վեց օր գործեսցես
և արասցես զամենայն գործս քո ո: Եւ
Ի: 9: Սոգոմն իմաստունը միջիւննե-

բու մօտ կը զրկէ՝ ծոյլ մարդը, որ աչխատասիրութիւն ուսանի. « Լրթ առ մրջիւնն, ո՛վ վատ, և նախանձեաց ընդ ճանապարհս նորա, լեր իմաստնապոյն եւս քան զնա ր: Առաջ. Զ. 6: Սեր Փրկիչը կը դատապարտէ այն անգործ ծառայն, որ առանց գործադրութեան կրթողու իւր տաղանդը: Պօղոս առաքեալը կ'ասէ. « Ընդ կամիցի գործել և կերիցէ մի: Լրդ լսեմք զոմանց 'ի ձէնջ' թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր չըլին. այնպիսեացն պատուէր տամք և աղաչեմք 'ի Տէր (Յիսուս) Քրիստոս, զի հանդարտութեամբ գործեացեն և զիրեանց հաց կերիցեն ր: Բ. Թեա. Գ. 10 — 12: 'Կարծեալ կը պատուէրէ նոյն առաքեալն՝ աշխատել ոչ միայն իրենց պիտոյքը լցուցանելու, այլ և կարօտելոց տալու կարողութիւն ունենալու. « Ընդ գողանայրն, մի եւս գողացի, այլ մանաւանդ վատասկեալցէ գործել ձեռք իւրովք զբարիս, զի բաւական իցէ տալ՝ ում պիտոյ իցէ ր: Ի Թեա. Դ. 25: « Լը զնոյն մի մեանց հոգայցեն անդամքն ր: Լ. Կրթ. ԺԲ. 25: Վերջապէս, Սուրբ Գիրքը կը նմանեցնէ մարդը՝ երբեմն երկրագործի, որ կը ցանէ հնձելու համար. երբեմն զինուորի, որ պարտաւոր է միշտ շարժողութեան մէջ լինիլ, երբեմն ծառայի, որ պարտաւորուած է տիրոջ սպասելու համար արթուն լինիլ և իւր պաշտօնը կ'ստարել:

Աշխատութիւնը և գործունէութիւնը մեր կեանքին շատ օգտաւէտ է: 'Նախ՝ մարմնոյ աշխատանքը և հոգւոյ գործունէութիւնը շատ կ'օգնեն կամ լաւ եւս ասել՝ շատ կարեւոր են մարմնոյ և հոգւոյ առողջութեանը և կրնապատեն մեզ կատարելագործուելու: Երկրորդ՝ աշխատանքն է միմիայն հնարք մեր կենաց պիտոյքը լցուցանելու:

Եւ ունեցածը պահպանելու, որմէ կախեալ է օրինաւոր հարստութիւնը. « Ընթատութիւն զայր խոնարհեցուցանէ, ձեռք ժրաց մեծացուցանեն ր: Առաջ. Ժ. 4: Երրորդ՝ աշխատանքն է մեր բաւականութեան աղբիւրը: 'Նա գեղեցիկ կերպով կը պահպանէ զմեզ ձանձրութենէ: Օլարձուութիւնքը քաղցը են միայն այն ժամանակ, երբոր կապուած են աշխատասիրութեան հետ: 'Կործուհի, աշխատասէր և իւր պարտքը կատարող մարդը, որ օգտաւէտ է հասարակութեան, միշտ յարգուած և սիրուած է ամենէն: 'Նա ուրախութեամբ և գոհութեամբ նրոյ կը տեսնէ իւր գերդաստանի բաւականութիւնը: Իսկ ընդ հակառակն՝ ծուլութիւնը և անգործութիւնը կը շնասէ գերդաստանին և կ'ապականէ: Ենդործ և պարապորդ մարդը անօգուտ է և անպիտան և ծանրութիւն է հասարակութեան: 'Չորրորդ՝ աշխատանքը կը թեթեւցնէ մեզ համար առաքինուլութիւնը, վասն զի՝ մեր պարտաւորուածութեանց մեծ մասը գործունէութիւն կը պահանջէ և երբեմն ծանր հոգացողութիւններ: Աշխատասիրութիւնը կ'ամփոփէ մեր միտքը առ հասարակ օգտաւէտ բաներու վրայ, և կը հեռացնէ մեզ փորձութենէ և վատ ընկերութենէ: Իսկ ընդ հակառակն՝ անգործութիւնը կը մոլորեցնէ մեր երեւակայութիւնը, կը զարթուցանէ զանազան կրքեր, դժբաղդ վիճակն կը ձգէ յանցանաց մէջ, և կը մօտեցնէ աւելն տեսակ չարութեան, որոյ համար իրաւամբ ասուած է թէ՛ « Ենդործութիւնն է մայր ամենայն չարեաց ր: Եւ հինգերորդ՝ երբոր մենք կ'աշխատինք հնազանդիլ 'Կտուծոյ և մեր հոգին նորա կամացը խոնարհեցնել, տարակոյս չըլլայ որ 'Կտուած կը տայ մեզ իր օրն ու յոյսութիւնը և կը վարձատրուի մեր աշխատանքը:

Վշխատանքը պարտաւորութիւն է ամեն մարդոյ համար, ոչ միայն չքաւորները, այլ առհասարակ ամեն մարդ, որուն Վրտուած պարգեւած է զգուծութիւն և հարստութիւն, կոչուած է աշխատելու: Վոյն իսկ հարուստները իրաւունք չունին աշխատանքէ հեռաւնալու, վասն զի աշխատասիրութեան մասին բերած ապացոյցները կը վերաբերին նմանապէս և հարուստներուն: Նոքա եւս պարտին վախենալ ձանձրութենէ եւ անհանգստութենէ: Վյս հիւանդութիւնը, կարելի է աւել, բուն հարուստներու հիւանդութիւնն է: Նոքա պարտաւոր են անգործութենէ փախչիլ, որ այս հիւանդութեան գլխաւոր պատճառն է: Նոքա պարտական են պահպանել եւ կառավարել իրենց կոյքը, եւ որչափ մեծ է կայքը, այնչափ կարեւոր է մեծ հոգացողութիւն, կարգ և մտադրութիւն: Նեգործութիւնը պատճառ կը դառնայ հարուստներուն վատնել իւրենց ստացուածքը մոլութեամբ և աւելի վնասել հասարակութեանը քան թէ չքաւորները: Որովհետեւ հասարակութիւնը հարուստներէն աւելի օգուտ սպասելու է և ոչ վնաս, բաւական չէ որ հարուստը օգնէ հասարակութեան միայն դրամով, նա պարտաւոր է օգնել նոյնպէս ծառայութեամբ և աշխատութեամբ: Վերջապէս Սուրբ Վրդը առանց բացառութեան ամեն մարդու վրայ պարտք կը դնէ աշխատելու: Հարուստներու արտօնութիւնը աշխատանայ մէջ այն է, որ նոքա կարող են իրենց ընդունակութեան և կամայ համեմատ գործ ընտրել, որ աւելի պատուաւոր լինի և վայելուչ:

Վյն ծնողքը, սրոնք մտադիր են և հետամուտ իրենց որդիքը այն ուստիճանին հասցնելու, որ ամեն աշխա-

տանքէ ազատ լինին, նոքա կը հակառակին իմաստութեան եւ հաւատոյ հոգւոյն, վասն զի՝ ամենամեծ ժառանգութիւնը, զոր կարող են ծնողք թողուլ իրենց որդւոցը, է նախ՝ Վրտուծոյ ունը և ապա աշխատասիրութիւնը: Վշխատասիրութիւնը աղքատ տունը կրկանգնէ, հարուստը կրպակ պանէ: իսկ ընդհակառակն՝ անգործութիւնը շինած տունը կը քանդէ, հարստութիւնը կը վատնէ, եւ այս պատճառաւ ռահմատաղ հասակէն հարկաւոր է մանուկները վարժեցնել աշխատասիրութեան, որ կարենան նեղութեանց համբերել, իրենց անձին և այլոց ծառայել: Հարկաւոր է կրթել մանուկները որ եւ իցէ արուեստի կամ կոչման մէջ, որ համաձայն է նոցա բնութեանը եւ ընդունակութեանը: Վյս ամեն իւր նամքներուն հետ հարկաւոր է նախ՝ հեռանալ ամենակերպ չար և վտանգաւոր կեանքէ: Նշրկորդ՝ հարկաւոր է յարմարիլ գերդաստանի պիտոյիցը և կարեւոր պահանջողութեանը: Չքաւորները եւս պարտաւոր են շատով ճարել իրենց հայր իրենց աշխատանքով: Նշրէք անհոգութեան կամ ունայնասիրութեան պատճառաւ չը պէտքէ յետ քաշուին ծանր աշխատանքէ, կամ այնպիսի աշխատանքէ, որ թէ եւ աշխարհի առջեւ նշանակութիւն չունի, բայց իր գերդաստանի համար շատ օգտաւէտ է: Նշրորդ՝ պէտք է արհեստը ընտրել որքան կարելի է ընդունակութեան համեմատ: Վյս զգուշութեամբ ընտրուած արհեստի մէջ մարդ կարող է աւելի օգտակար լինիլ, և այս ընտրողութիւնը համաձայն կը լինի՝ Նախախնամութեան կոչմանը:

Վթէ կը փափաքինք, որ մեր աշխատանքը ճշմարտապէս օգտակար եւ

փրկարար շինի, պարտաւոր ենք հե-
տեւիլ այն գլխաւոր կանոնին, որմէ
կախուած են միւսները: 'Եփեմ' պար-
տինք աշխատել ոչ թէ աշխարհի որ
գլոց նման ենթարկուիլ մեր հաճոյքին
կամ ագահութեամբ հետեւիլ մեր
փարթամութեան կամ ցանկութեան
պահանջողութիւնները բռնականացը-
նելու, այլ արարտինք աշխատիլ որդի-
ական հնազանդութեամբ և Մտուծոյ
օրինաց համեմատ, 'ի բոլոր խղճէ շար-
ժուած մեր պարտաւորութիւնը կա-
տարելու և դառնալու օգտակար մեր
անձին և հասարակութեանը, և ոչ թէ
որպէս անպիտան անգամ ծանրանալու
հասարակութեան վրայ: 'Խիով բանիւ
պարտաւոր ենք աշխատիլ Մտուծոյ
համար և Մտուծոյ առջեւ, բարձրա-
ցընելով մշտ մեր հոգին և մեր սիրտը
առ մեր երկնաւոր Հայրն, եւ նորա
փառացը նուիրելով մեր գործքը եւ
աշխատանքը: 'Երկրորդ' մեր աշխա-
տանքը պէտք է համաձայն լինի բա-
րութեան կանոններուն: 'Երրորդ' պար-
տաւոր ենք աշխատիլ սիրով և հաւա-
տարմութեամբ առ Մտուած, որ նա
օրհնէ մեր աշխատանքը և միշտ ճա-
նաչենք և խոստովանինք այն ճշմար-
տութիւնը. «Եթէ ոչ Տէր շինէ ըզ-
րուն' 'ի նանիր վատակին շինողք
նորադ, 'Ադ, ձեւ, 25: 'Եր երկնա-
ւոր Հայրն է, որ կրտայ մեզ մեր
ամենօրեայ հացը, եւ նորա օրհնու-
թիւնն է՝ որ կը հարստացնէ զմեզ:
«Օրհնութիւն Տեառն 'ի գլուխս ար-
դարոց և 'ի նոյն մեծացուցանէ, և ոչ
եւս առաւելու արտմութիւն 'ի սիրա-
նորադ: 'Եւ, 22: 'Այն տաղանդ-
ները, այն հմտութիւնները եւ այն
գործունէութիւնը, որոց վրայ աշխար-
հի որդին կը դնէ իւր յոյսը եւ հա-
ւատը, ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ միջոց,
գլխ. Մտուած 'ի գործ կը դնէ մեզ

պահելու եւ պաշտպանելու համար:
'Չորրորդ' պարտաւոր ենք աշխատիլ
հանգիստ և խաղաղ հոգւով, առանց
նեղանալու, և եթէ մեր հոգացողու-
թեանը համեմատ չաջողի մեր աշ-
խատանքը, պիտի իմանանք որ այս յա-
ջողութիւնը մեզմէն կախուած չէ, և
մեր երկնաւոր Հայրը ունի հազարա-
ւոր միջոցներ մեզ օգնելու: 'Մտուծոյ
երկիւղած որդին կարող է ամենագոր-
ծունեայ կենաց և հոգացողութեան
մէջ հասկանալ եւ գործ դնել Փրկչի
այս պատուէրը: « 'Են այսուհետեւ
հոգայցէք և ասիցէք, զինչ կերիցուք,
կամ զինչ արեցուք, կամ զինչ զգեց-
ցուք, զի զայդ ամենայն հեթանոսք
խնդրեն. քանզի պիտէ Հայրն ձեր եր-
կնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամե-
նայն. 'Ապ, Ծ, 31—32: Հինգերորդ՝
պարտինք աշխատիլ շարունակ և հա-
ւատարմութեամբ, բայց միշտ իմաս-
տութեամբ և չափով: 'Յերմեանդ
բարեպաշտութիւնը երբէք ներհակ
չէ մեր գործունէութեանը եւ բնաւ
չուրանար մեր աշխատասիրութիւնը,
այլ ընդհակառակն 'կը զօրացնէ մեր
կարողութիւնը և զգաստութիւնը:

Աշխարհի որդին աշխատելով մի-
այն իր անձի համար՝ կը սահմանափա-
կէ իր աշխատանքը իր պիտոյից և ցան-
կութեան համեմատ և աշխատութե-
նէ կը դադրի: Երբոր ծանրութիւնն
աւելի է քան թէ քաղած օգուտը:
Իսկ ընդհակառակն՝ Մտուծոյ որդին
կ'աշխատի աւելի աստուածային փա-
ռաց համար, իր ընկերի օգտի համար
և երբէք իրաւունք չը համարէր աշ-
խատութեան դադրելու, քանի որ
մտադիր է բարեգործութիւն առնել:
Ինչպէս աշխարհի բազմաշահառէր որ-
դին կը ջանայ ըստ աշխարհի շփուա-
նաչ, նոյնպէս Մտուծոյ երկիւղած
որդին կը փափաքի աստուածաշահաց

գործքերով հարստանալ և միւս կողմէն կ'աշխատի չափաւորել և կանոնաւորել իւր աշխատանքը այն սեղ, ուր լ'ստուած սահման դրած է : Նա ուշադրութիւն կը դարձնէ իւր հոգւոյ և մարմնոյ զօրութեան վրայ և չը կամիր նոցա աւորջութիւնը մաշել հարստութեան ճանապարհի վրայ : Նա կը սրբէ և կը պատուէ այն հանգըստեան օրը, որ նշանակուած է լ'ստուծոյն պաշտօնն տալու համար և մեր հոգին հոգալու համար : Նա ժամանակէն բաժին կը պահէ իր պարտաւորութիւնները կատարելու համար և հոգեւոր բարութիւնը շտեմարաններու համար : Նա սրբա են նորա գլխաւոր պարապմունքը, նորա մեծ օգուտը և ամենակարեւոր պիտոյքը : Վեցերորդ՝ պէտք է աշխատիլ հեղութեամբ և զղջման հոգւով, միտ բերելով որ մեր ծանր աշխատանքները և մեր կենաց քաջարութիւնները մասն են այն պատժոյն, որ տրուած էր մեզաւոր մարդուն և պէտք է շարժեն մեզ դէպի այն երջանիկ կեանքը, ուր մեր պիտի հանգստանանք մեր աշխատանքէն, ինչպէս կ'ասէ Յովհաննէս

առաքեալը . « Երանի մեռելոցն՝ որք ի տէր ննջեցին, այժմիկ վարկազակի զայս ասէ հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոքան դհեռ նոցադ : Յայր . ԺԴ . 13 :

Քրիստոնեայն հետեւելով այս կանոններուն կը պահէ ազատ սիրտ աշխատանաց մէջ և կ'իմանայ ինդրել նախ քան զամենայն լ'ստուծոյ արքայութիւնը և արդարութիւնը . « Ինդրեցէք նախ զարքայութիւն լ'ստուծոյ և զարդարութիւն նորադ : Մատ . 2 . 13 : լ' յապէս կարող է քրիստոնեայն աշխատել և պարտաւորութիւնը համաձայնեցնել լ'ատթէոս և լ'ուկաս լ'ւեառարանչաց խօսքերու հետ, (Տեա Մատ . ԻԴ . 28 . 2-րդ . ԺԴ . 16), որոնք իսկապէս կ'արգելուն միայն անօգուտ, չափազանց և կամ տնտեղի հոգացողութիւնքը : լ' յապէս ահա մեր հոգեւոր աշխատանքը պարտաւոր ենք գործ դրնել մեր փրկութեանը հասնելու համար և ոչ թէ միայն մարմնաւոր կերակուրի և պիտոյից համար : « Երկայք գործեցէք մի զկրտսական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանս յաւիտենականսդ : Յով . 2 . 27 :

ԸՌ ՀԱՅՐԵՆԻՍ ՀԱՌԱՉԱՆՔ

Պանդուխտ եմ ես թշուառութեամբ օտար երկիր թափառած .
Թարմ հասակէս անգութ բաղդէն միշտ տարազիր հալածուած .

Օտար հովեր օտար ջրեր չեն տար սրնաւիդ նժդեհին,
Նա անդադար կը հառաչէ . « Լիւ Հայրենիք, Հայրենիք :

Ո՛հ, բնջ անոյշ կը հընչէ ձայնն . քաղցր է անուն հայրենեաց .

Օ գացու մներն յափշտակէ հըզօր ձեռօք վեհապանն,
Ինչ վեճակի մէջ ալ ըլլայ հայրենասէր սիրտն անբիծ

Սուրբ յիշատակն վեհ հայրենեաց տայ հառաչել Հայրենիք .

Սուտ է այն որ անխղճաբար ըտաւ երբեմն անխորհուրդ :

Թէ « զՀայրենիս յիմարք ինդրեն, իսկ իմաստունք ըզհանգիստոյ, Ըյլ ես ասոր հակառակը կը պնդեմ միշտ թէ « յիմարք Հանգիստ կ'ուզեն ուր ալ ըլլան, բայց իմաստունք Հայրենիքոյ: Ըհ Հայրենիք իմն Հայրենիք, ինչպէս ըզքեզ մօռնամ ես, Ինչպէս քո բիւր երախտիքներդ հալածեմ իմ խեղճ սրտէս, Ինչպէս անթիւ յիշատակներդ կրնամ հերքել իմ մօքէս, Որք յարածամ տան հառաչել « ահ Հայրենիք Հայրենիքոյ:

Ո՛վ կուտար ինձ արծուոյ թեւեր որ թռչելով հանգչէի իմ Հայրենեաց սիրուն ափունք, հոն կենաց օգ ծծէի, Ո՛վ զիս փրկէր օտար երկրէն, ո՛հ, շատ եղաւ ալ հերիք, Ես դառն արտասուք թափեմ աղի և հառաչեմ Հայրենիք:

Իմ Հայրենեաց երկնից ամպերն կեանք կը ցօղեն անդադար, Իմ Հայրենեաց զեփուռն անոյշ ոգեւորիչ շունչ կուտար, Ընձահուծեան համ կուտար ինձ ոսկի գետոյն պարզ ջրիկ Որք պանդխտին կուտան կանչել միշտ Հայրենիք, « Հայրենիքոյ:

Իսկ օտարին վայելուծիւնք կարծես դառն են պանդխտին, Ըպերմանիկ կեանք կը վարէ չիկայ հանգիստ իւր սրտին, Օտար երկրի վարդենիներն փուշ կը բերեն խոցոտիչ, Ո՛վ Հայրենիք քո փուշն անգամ վարդ է սրտից ամբօխ:

Իմ Հայրենի դաշտաց ծագիւնք դուք կը բուրդէ խիստ անոյշ, Դուք չքեղ զարդ ազատ ճակտին կ'ըլլաք կուսից մեր քնքուշ, Չեր կենսաբայր սիրուն հոտեր քիչ մ'ալ առ իս շնչեցէք, Եւ իմ սրտիս կարօտն անբոյժ գէթ վայրիկ մի մեղմեցէք:

Ո՛վ դու լուսին իմ Հայրենեաց, և դուք աստեղք շողողուն, Զեր ոգեզմայլ տեսքն երբ յիշեմ բերկրանք ամեն վիս թողուն, Օտար երկրի լուսինն Լ'աստեղք չեն փայլի ո՛հ ձեզ նման, Զեն տար սրտիս մխիթարանք ինչպէս տեսիլք ձեր կուտան:

Վերջապէս չիք հեգ պանդխտին լոյս, կեանք և յոյս ոչ մի տեղ, Չիկայ հանգիստ, չիկայ ծիծաղ, չիկայ ակնարկ սիրազեղ, Ոչ բարեկամ, ոչ բարերար, ոչ ալ անկեղծ սիրտ մը կայ, Որ խեղճ պանդուխտ հայրենասէր սրտին քիչ մը սփոփանք տայ:

Քանի անգամ որ կարծեցի թէ ապահով կեանք գտայ, Ըյնքան ալ խիստ չար վրտանգներ չորս դիս պատած միշտ տեսայ, Որչափ որ ես յուսացի թէ գըթած սրտի մէջ կ'ապրիմ, Ըմեն ատեն սիրտըս մաշող անգուծ ձեռաց պատահիմ:

Ըհ խորտակուած սիրտ վերաւոր աղէկըտուր հառաչէ, Ընմխիթար անօգնական միշտ Հայրենիք իմ կանչէ, Քանի կրնաս, սիրտ իմ լըքեալ, դու հանգիստներ երազէ, Հանգստութիւնն անգուծ ձեռք մը քեզմէ ի բաց հալածէ:

Ուտ ես օտար ժրպիտները, նենգ ես բոլոր խօսք քաղցրիկ, Պատրանք են միշտ կարեկցութիւնք օտար սրտին խաբուսիկ, Ո՞նչ թէ տեսնես օտար աչաց արտասուիլը յորդաբուխ, Ո՞ր խաբուիր դու քեզ համար չեն . . . շատ փորձեց զայն իմ գլուխ:

Իհ, ինչ անմիտ եմ եղեր ես որ այս չարեաց աշխարհէս
Իարեաց յուսով զիս կը մաշիմ, յոյսեօ հատան վերնապէս.
Իարուեցայ միշտ յիմարութեամբ խոստումներու միտ դրոյ,
Իայց իօսք պահող հաւատարիմ կենացըս մէջ չեգըտի:

Չիղրկեցի, զրկուեցայ, չի խաբեցի խաբուեցայ,
Իայց ինչ օգուտ թուլցայ, ըքայ, սրտով մարմնով մաշեցայ.
Թէ այս վերջին օրերուս մէջ Նստուած հայի հաշտ ակամբ,
Լա պարգեւէ ինձ իմ բարիքս, վարձատրուած ես կ'ըլլամ:

Թէ չէ խապառ պիտի ողբամ մինչեւ շիրմիս մութ եղերք,
Պիտի գոչեմ դառն արտասուօք, ա՛հ Հայրենիք, Հայրենիք.
Պու Հայրենիք գիտես թէ ես ինչ կորուսի, ինչ մեծ գանձ,
Պիտես այն մեծ զօհը սրտիս . . . զոր ես բընաւ չեմ մոռցած:

ՊԹԹԹ Ս'օրըս քաղցրիկ տեսոյն զըրկուեցայ մըշտապէս,
Իայց անօգուտ, ո՞վ հասկըցաւ թէ ինչ գընաց իմ սրտէս .
Ո՞վ ճանցաւ թէ ինչու համար այս զօհն ըրի ես յօժար.
Լա ինչ արդիւնք . . . ոչինչ, միայն աղիկէդ ողբ անդադար:

Պու միայն ես ո՞վ Նստուած իմ գԹԹԹ, բարի մարդասէր,
Պու ողորմէ ինձ թշուառիս գէթ խոստումէդ մի զրկեք.
Պու արդար ես, այլ ողորմած եւ անսահման բարերար.
Պու առատ ես, տուր ինձ բարի շնորհացդ արժան ըրէ յար:

Սիւիթարիչ գու ես միայն եւ բարութիւն անըսպառ,
Սիրոյ աղբիւր, յուսոյ խարխիս, գու ես կենաց ճոռնապարհ.
Սաղնորդէ ո՞վ Նստուած իմ որ ես գընամ անխառն,
Լա վայելեմ բերկրանքն անեղծ երջանկութիւնն անպղտոր:
Լթէ չիկայ կենցաղոյս մէջ վախճան սրտի բաղձանաց
Լնշուշտ երկինքն անվախճան փառք կայ եւ հանգիստ միշտ անանց,
Լթէ տեսեմ կամ չիտեսեմ իմ սիրելի Հայրենիք,
Յուսամ տեսնել այն Հայրենիքն որ կայ պատրաստ ինձ երկինք:

Կ. Յ. Եսայիք:

Ինչպէս օտար լեզուներէ թարգ-
մանուած երկասիրութիւնքը օգտա-
կարութիւն ունին ընթերցողաց հա-
մար, նոյնպէս կը կարծենք մենք որ շա-
հաւէտ կ'ըլլան մեր գրոց լեզուէն աչ-
խարհաբար թարգմանուած ընտիր հա-
տուածները, մանաւանդ եթէ գրուած
քի պարունակութիւնը մասնաւոր
խորհրդածութեամբ բացատրուած
ըլլայ. վասն զի գիտենք արդէն որ մեր
հայերէն ընթերցողներէն շատերը կա-
րողութիւն չունին գրոց լեզուն լեզ-
ւի

վին հասկընարու և շահուերու: Խոս-
տանալով ուրիշ անգամ աւելի ընտիր
հատուածներ քողուածելու մեր նախ-
նական մատենագրութենէն և աշխար-
հիկ լեզուով հաղորդելու ընթերցո-
ղաց, առ այժմ կը գնենք մեր Լիւիշէ
վարդապետի (Կալաֆո Գրան) գրուած
ճառը, զոր թարգմանած է Լ. Թո-
ռոյս Եսայիքի որոց վարժարանի ա-
շակերտ Յ. Լնուշեան, յաւելցնելով
յետագայ համառօտ դիտողութիւնը
որպէս յառաջաբան:

Եղիշէ վարդապետի Սիմէյան ճառը, ներքին իմաստին պարունակութեանը նայելով, երեք մասներէ կը բաղկանայ : Ը աջնայն մէջ կը նկարագրէ հին ժամանակի անապատաւութեանը, որոնք քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ Թեբայիթի անապատները քաշուած աղօթից եւ ճգնութեան կը պարապէին եւ իրենց ձեռքերով կը վտտակէին եւ կ'ապրէին : Երկրորդին մէջ խօսքը կ'ուզէ իր ժամանակի Հայ միանձանց վրայ, որոց շատերը աշխարհի աւերանաց համար զգացած սրտի ցաւէն եւ ունեւ գուցէ հանգիստ գտնելու համար, առանձնացած էին, եւ առհասարակ ամենքը կը կրօնաւորէին, չըմենայելով նա եւ իւր անձը : Երկուսն ալ կը կարծէ ըզգայուն վարդապետը թէ Հայոց աշխարհի բոլոր աւերմունքը միանձանց աշխարհասիրութենէն, անընթացաւ դութենէն եւ սառնասրտութենէն յառաջացած է : Այնք գիտե՞ք որ Հայաստանի նոյն ժամանակի աղէտները արտաքին էին, այն է պարսկական հալածանքներէ, սակայն Եղիշէի նման բարեպաշտ սրտերն են միայն որ իրենց անձը կը մեղադրեն եւ հաւանքարիքները իրենց թերութեանցը կուտան քան թէ ուրիշներուն : Եւս ինքնադատութիւնը այն փրկարար ճանապարհն է, որով պարզապէս կերելի մարդոյ շարժուն եւ կենդանի զգացմունքը եւ ուղղութեան փափաքը : Փափկասիրտ վարդապետը արդէն ինքը քաջ նահատակաց ընկերակից էր հաւատոյ նահատակութեան մէջ ինչպէս յայտնի է իւր արանատես եւ արտասուօք գրուած պատմութեանէն : Սակայն Սիմէյան ճառին մէջ միշտ առաջին դէմքով կը խօսի եւ իւր ժամանակին գտնուած ունեւ միանձանց թերութենէն չուզէր ազատ կացուցանել իւր անձը : Ինչպէս ա

սայինք, բարեպաշտ սրտերու գործն է այս, ուրիշները յանդիմանելու եւ ուղղելու համար նախ իրենց անձէն սկսիլ : Եւս կերպով եղած կշտամբութիւնը եւ խրատը միշտ արդիւնաւոր է երբեք հակառակութիւն չը յարուցանէր այլոց կողմէն : Այնք այն պէս գիտե՞ք, որ թէ ինքնադատութեան սկզբունքը ըստ մեր այժմեան եկեղեցականաց մէջ, ամենեւին տեղի չը պիտի ունենային այն շանթերը, որոնք ամեն օր կը տեղան, եւ անկասկած սէրը պիտի թագաւորէր եկեղեցւոյ աշխարհական եւ եկեղեցական զուակաց մէջ, որոյ հետեւանքը պիտի ըլլար միաբանական ջանք ազգաշէնութեան համար : Կշտամբանքները արտասուօք եւ դառնութեամբ սրտի աւարտելէն զինի՞ ճառի երրորդ մասին մէջ յորդոր կը կարգայ միանձանց բարեւեր վարդապետը եւ կը քաջալերէ թօթափել ամենայն մեղկութիւն եւ աշխարհասիրութիւն, եւ որպէս արիական ըմբիշ պատերազմիլ մօլութեանց դէմ եւ առաքիտանալ եկեղեցական կոչման մէջ բանիւ եւ արդեամբք, եւ այսպէս արժանանալ ճշմարիտ հովուաց փառալոյ, առաքելոց վեճակին եւ մարտիրոսաց խումբին : Եւս եռանդուն փափաքով կը կնքէ իւր ճառը, ինչպէս պիտի տեսնենք ընթերցողք :

Ե. Դ. Ե. Ե.

ՅԱՂԱԳՍ ՄԻԱՆՁԱՑ

Եւս մարդիկը՝ որոնք թէ եւ աշխարհի մէջ են, սակայն իրենց կեանքը Եւս առաքալաւութեան կը նուիրեն, այն պիտիք ի բնէ իրենց տղայութենէն բոլոր սրտով ներգութեանց մէջ կը վարժուին, հեռանալով իրենց հայրենի երկրէն եւ անշէն անապատ տեղեր

քաշուելով, և այս չեթէ շատ մը աղ-
քառ մարդիկներէ փախչելով կ'ընեն,
այլ անոր համար որ աշխարհս ամեն
տեսակ չարութիւններով պղծուած կը
տեսնեն: Ինչպէս շատ անգամ հարա-
ւային կողմերը առանց կանանց ընկե-
րակցութեան շատ մը մարդիկ կը տես-
նանք, որոնք զանազան ապգերէ և լե-
զուններէ կուգան կը հասնին մէկ տեղ,
և իբրեւ հայրենի գաւառի մէջ ժողո-
վուելով, երկերկու կամ երեք երեք և
կամ ասոնցմէ աւելիներ մէկ մէկու
հետ բնակութիւններ կը հաստատեն:
Այլ մէկէ հեռի առանձին առանձին
խուցեր կը շինեն, փոքրիկ որմերով և
ձեղուններով ցուրտէ և խորշակէ պահ
պանուելու համար. որոնց խուցերու
յատակները անգորգ են, և միայնա-
կեանքներու անկողնիւր խոտեղէն: Ա-
նոնց զգեստները անպաճոյճ և շատ գը-
ձուձ են. անոնք՝ ամառը կարճ և ձը-
մեռը երկայն գգեստներ կը հագնին.
և վրանին մեկնաւոր փիղոններ կ'առ-
նուն: Այս ամենը կ'ընեն իրենց մարդ-
կային բնութեանէն ստիպեալ, որ կ'ու-
ղէ իւր մերկութիւնը ծածկել:


Այս ամենէն վերջը նա մանաւանդ
գուարթ հոգւով թափօրական պարե-
րու անդադար պաշտաման մէջ բոլոր
արարածոց շօրը հագեւոր երգեր կը
նուիրեն: Այլմանց դէմ կը կանգնին
աչքերնին խոնարհած՝ իրենց ոտից մա-
տերու ծայրերը նկատելով, իբր թէ
ամենքը միասին մէկ տեսակ կէտ կը
նային: Այլ ձեռքերնին ծնօտներնուն
և ձախերնին ալ կուրծքերնուն վրայ
կը դնեն. ինչպէս որ ըստ իս իրենց բնա-
կան հայրերէն ուսած են թէ, մարմնի
ամենապատուականագոյններ երկու են
կենդանական և խորհրդական. այսինքն
զգացմունք և մտածմունք. այս անձին-
քը՝ այս երկու պատուականներով եր-
կու բանի կը սպասաւորեն. այն է, ցոյց

հետեւ մարդու կենդանութեանը
որամտութիւնը հակառակ բլլալով
զայն կը փնտէ, անոր համար ձախ ձեռ-
քերնուն սանձովը սրտմտութիւնը կը
սանձեն. և ոչ ձեռքերնին ալ ծնօտ-
նուն վերայ դրած՝ խոհականութիւնը
կը պահպանեն բերնին գրան մօտ. որ-
պէս զի չըլլայ թէ ուղիւ փառաորու-
թեան մէջ այլանդակութիւն մի խառ-
նուի: Այս մանաւանդ այս երկու մա-
տերու տակ ամեն զգայութիւնները
կը սանձուին և կ'ուղղուին, աչքերը
ուղիղ տեսութե, ականջները զգաստ
լսողութեան, միտքը սուրբ իմաստու-
թեան և ուրիշներն ալ իրենց մասին
համեմատ:

Այլ երբոր ամենքն ալ այսպէս կարգ-
կարգ եղած կը շարուին, վեցթեւեան
սրովէներու նման շուրջ փակելով,
իրենց անդադար երգերը յերկինս ուղ-
ղելով իրենց Արարչին միաբանութեան
խորհրդին համեմատ իրենց օրհնութիւն
երեքական անգամ կը կրկնեն: Այս-
պէս բոլոր ցերեկը քաղցր երգով պա-
րապելով, երկնային կերակուրներով
կշտացած և զմայլած, ուրախ զուարթ
երկնայեան կը հասնին. և սակաւ ինչ
կը ծաշակեն չանօթենայու՝ և կը խմեն
ջնարաւելու համար, քանզի անոնք ալ
մեր զգայող բնութեան նման մար-
մին ունին:

Այլ արդ դուք որ կը լսէք ուտել բա-
ռը, չըլլայ թէ մեր ուտելուն պէս
հակնաք. անոնց հացը անպաճոյճ և
վայրենի բանջար է՝ զոր աղով կը հա-
մեղացընեն, և խմածը յստակ ջուր՝
զոր ամպոց շնորհիւ գուբերու մէջ
կը ժողվեն:

Այլ սակայն այս ալ չեթէ ցերեկ
ստեն, այլ միաբան երկար օրը պահե-
լով արեգական մարը մօտելուն կը
պանեն: Այլ տակաւին երկար ժամանակ
կը համբերեն, մինչեւ որ իւրաքանչիւր



իւրեանց աստղեր կայանքին մէջ պայծառանան և լուսաւորեն խաւար աշխարհը . այն աստեղն ամենքը միասին իբրեւ թէ միաբերան գոհութիւն կը մատուցանեն Աստուծոյ այս խօսքերը ըսելով . խաւար ժամանակի մէջ խաւար կերակուրը մեր խաւար մարմնոյն տանք :

Այսպէս բարձրաձայն զԱստուած փառաբանելով խնդութեամբ և ուրախութեամբ իւրաքանչիւրն իւր տեղը կընտրի . կ'ուտեն հաց և ծովերին (զաթրին) , և կը խմեն ցուրտ ջուր : Իսկ որովհետեւ իրենց մէջը փափուկ մարմին ունեցող ծերեր կը գտնուին , այն պիտեաց տաք ջուր կուտան , զոր բարեխառն կը կոչեն . իսկ գինի և ուրիշ զանազան բաներ ամենեւին չեն գտնուիր անոնց խուցերուն մէջ : Այս անպաճոճ կերակուրէն ելլելով միաբանութեամբ այս խօսքերը կ'ըսեն . Սկստէր փառք կուտանք քեզ . փառք քեզ միայն , որ ես մեր թագաւորը , և որ մեզի ուրախ կերակուր շնորհեցիր . ըզմեզ քու սուրբ հոգւովդ լեցուր , որդիս զի քու առաջը շնորհք գտնանք և չամաչենք , որովհետեւ դու արդարապէս կը հատուցանես վարձ և պատիժ իւրաքանչիւրին իւր գործոց համաձայն : Եւ այսպէս ինքզինքնին խաչակնքելով սակաւ ինչ թեթեւ քնով կը ննջեն . որպէս զի չըլլայ թէ այն անհալելի կերակուրով իրենց մարմնոյն գեղեցիկ շինուածը չփոխուելով խանգարի : Կան եթէ սակաւ ինչ շատ գնացած ըլլան , հոգեկան երազներ կը տեսնեն և մի եւ նոյն ժամանակ այն տեսիլները իբրեւ սուրբ մարգարէներու խօսքեր կը մեկնեն :

Եւ ամենքն միասին արթննալով դարձեալ շուրջնակի պար կը բռնեն չեթէ միմեանց հակառակ և կամ անհրէնազանգ գտնուելով , այլ քաղցր

հաւանութեամբ և հեզ հանդարտութեամբ իւրաքանչիւր դասու առաջնորդը իւր ձայնը կ'արձակէ հոգեւորական քաղցր երգերը փոփոխելով , որոնց՝ միւս կրտսերները կամ փոքրները միտ դնելով . իւրաքանչիւրը իւր ձայնը իւր առաջնորդին երգերուն հետ կը խառնէ հնչման միաբանութիւն կազմելով և յարմարցնելով , այնպէս որ , կարծես թէ այնչափ ձայներու բազմութիւն մէկ բերանէ կ'ելնեն : Այսպէս ձայնաւոր պաշտօնները շարունակելով ըրջը ամենքը միասին ծունկ չոքելով լուսութեամբ աղօթքի կը կանգնին . և դարձեալ աղօթից առաջնորդի՝ հրաժանաւ ոտից վերայ կ'ենելով , փառաբանութիւնը կը վերջացնեն :

Այսպէս ցերեկեան աղօթքը կատարելով , աւելի լաւ կը սեպեն գիշերը կանուխ ենելով մինչեւ առաւօտ աղօթից պարապիլը . կը կարգան սուրբ գիրքեր . իսկ որոնք որ վարդապետութեան շնորհքը ունին , անոնք՝ լողնելով մխիթարելու համար մեկնութիւններ կ'ընեն : Աշխարհիս ոչնչէ ըլլալուն վրայօք պատմութիւններ ընելով , ասոնցմէ անմիջապէս ետքը սուրբ գրոց վկայութեամբ ժողովդեան բարի խրատներ կուտան : Այնպէս որ , այս խօսքերը լողները բոլորովին կը մոռանան աշխարհային բաները , և ամենեւին չեն յիշեր հարկաւոր կերակուրն և ըմպելին անգամ :

Եւ այնպէս կ'ուրախանան և կ'այրին Աստուծոյ սիրովը , որ իրենց անձը աշխարհի մէջ չեն համարեր , այլ յերկինքս , ուստի և գլուրութիւն բոլոր գիշերը մինչեւ առաւօտ կ'աղօթեն : Եւ որ պառաճառը այն է , որ աշխարհէս սուկացած և երկինքը զգեցած են : Եւ այն ասոնց դրան մօտ կ'ամաչէ . այս սուրբ միայնակեացներու և աշխարհէս ելլելու ատենը սաստիկ կը ցաւի . դժոխքը ,

Այնպիսի միայնակեացները քանի որ կենդանի են, աշխարհիս ազօթքը տնոնց շնորհիւ յերկինս կը բարձրանայ, անոնց ոսկերքն ալ բոլոր տնոնց ապաւի նողներուն գանձ են։ Անոնց համբաւը բոլոր ծոյերը կը քաջալերէ, և անոնց գործերը բարեաց քարոզիչ են ամեն առաքինական գործեր գործելու փափաքողներուն, վերջապէս անոնք հրեշտակաց ընկեր և նք խորհրդութեան օթեւան են։ Արդ, այս ամենը գիտնալով ո՞ր ճշմարէ, կը պարտաւորիմք աշխատել և նոյն սուրբ ըլլալու նախանձը մեր սրտին մէջ բորբոքելով, նմանել այնպիսի բաղմադունդ միայնակեացներու, որոնք աշխարհէս փախելով վերին մայր քաղաքը կը վազեն, որ ամեն երկրաւոր ախտերէ ազատ է։ Ի՞նչ դժուարութիւն կայ, ո՞չ ապաքէն անոնք ալ մեր բնութեան ընկերներն են, այն բնութեան որ կը զօրացնէ տկարութիւնը։ Այսինքն թէ ուզէ, ձեռք զարկ հաւատքով, յուսա, սիրէ, և այն ստեն կարող ես քու վրադ ալ այնպիսի նահատակութի մը կրել։ Այս աշխարհիս ժամաճակաւոր չարչարանքը չեն կարող կշիռ գալ խոյն կենաց հետ, որ այնպէս ճգնողներուն պատրաստուած է։

Այս շատ կը վախճամ մեր ծոյութենէն, տեսնելով որ գրեթէ ամենքս ալ երկրաւոր ստացուածոց մէջ կը կորսուինք։ Այս ահա այժմ իմ բնութիւնը չպիտի կշռամք ու յանդիմանէ զիս, որ մերկ ստեղծայ, դախտին մէջ մերկ դրուեցայ, անկէ մերկ ելայ, և վերջապէս մերկանդամ նորէն հող ոյտի դառնամ, հապա թէ որ չենք կրնար բան մի տալիլ ասկէց, քիչու այս աշխարհիս հարստութեան մէջ կոյր զկուրոյն կը չըջինք։ (Այնպիսեաց, ստակալով հանուէ այդ հարստութեան գէգսաններէն նենդաւոր թշնամիին ամուր և թանձր աման մի ըլլար, կարելի է որ քեզ մօտ

գարանի մտնելով, յանկարծակի քու վրադ արշաւէ դքեղ կողոպտելու, և այն երկնաւոր գանձերը քենէ յափշտակելու համար։

Ի՛նչ անկան համարէ քեզ տերունական կանոնը թէ երկրաւորներէն ոչ մէկը չէ կարող երկու տիրող ծառայել, որ առանց միջնորդի և մեկնութեան պարզապէս ըսել կ'ուզէ թէ, դուք կարող չէք Վստուծոյ և միանգամայն մամնայի հաճոյ ըլլալ։

Այս այժմ նոյն իսկ մեր աշխարհին մէջ ոչ որ ուզատ չեմ տեսներ այս ախտերէն, ամենքս ալ գեղեցիկ գրուած ներու հակառակը կը կարդանք. ու իստաւորութեան պատճառաւ մեր սուրբ ծնողներէն հեռանալով շատ մի օտաւրտի հոյրեր գտանք. զանոնք զորս պատուել կը պարտաւորէինք, անարգեցինք, և անոնց՝ որոնց մեծարանք տալ ամենեւին իշխանութի չունէինք, մեծամեծ պատիւներ տալով՝ զմեզ դաւաղան ախտերու ենթակայ ըրինք։ Այս զատ եղանք արքունի հարկէ, զոր ենթէ տալինք մեզք չկար, և ստացուածոց հարկին ծառայ եղանք, որ ամեն անստակ ագահութիւններով լեցուն է։ Այս, չամուսնացանք, տակայն աշխարհականներէ աւելի բարձր գահեր շինեցինք մեզի։ Յարմար և գեղեցիկ տնկողններու մէջ կը փախկանանք, և մեր միտքը բոլոր գիշերները աղտեղի խորհուրդներով պաշարուած՝ մեր վրայ կ'ողջայ։

Այն ոտից կօշիկները զմեզ կը յանդիմանեն, թէ մեր ճանապարհները սուրբ չեն, մեր հանդերձներն ալ գործքերնուս վրայօք կը բաղրեն, թէ մենք մերկ ենք երկնաւոր զգեստներէն, և մեր երկրաւորներն մեզ կ'իմացնեն թէ, տիրող առաջը օգերուն վրան չպիտի բարձրանանք։ Այն ապարաններու շէնքերն ալ կը յայտնեն մեզ, թէ երկին

քը առանց ձեռագործի տաճար չու-
նինք, ուր պիտի մոնեն ամեն երկրա-
ւոր օրհնութիւնները: Ս'եր ան-
դաստանաց կարուածներն եւս կը կը-
տամբեն զմեզ, թէ երկնաւոր յարկին
մէջ բաժին չունինք. կերակուրները ու
մենանուտստ ագահութեամբ կուտենք
խօս մարդուս խորհուրդն ու միտքը
պղտորող գինին ամենեւին չափ չունի:
Մենքս ալ խոր քնով կը ննջենք, և ճըշ-
մարտութիւնը մեզ երազ կը թուի:
Ս'եր մտաց աչքերը չեն տեսներ հոգե-
ւոր խորհուրդները, սակայն աշխար-
հիս կենացը պահշտութեամբ նայե-
լէն ալ չեն յադեհար. ակնջներնիս
սուրբ գրոյց ընթերցումէն դարձա-
ցած, մի միայն մեր խաշանց մայիւնը
կը լսենք, Հոգւոյն Սրբոյ անյշ հո-
տը մենէ հեռացաւ, վասն զի մենք
այս օրհնութիւնը աշխարհիս իւղը
անկէ աւելի սիրեցինք: Ս'եր ոգւոյ
քիմբերը երկնային կերակուրը չեն ձա-
շակեր, որովհետեւ զանազան խորտիկ-
ներով պարարեցինք մեր անձը: Ս'եր
երեսաց գոյնը մութ է, ըստ որում
մեր երեսները սուրբ խորհուրդներով
չփայլեցան: Ս'եր մարմնոյն անդամնե-
րը ցաւով լցուած են, վասն զի մեր
մարմինէն յառաջ հոգինիս ցաւցաւ-
ցինք. և նոյն ինքն մեր անձին մէջ ե-
րեսանց ծեփուած գերեզմաններու կը
նմանինք. որովհետեւ Սուրբ Հոգւոյն
չնսրճեմքէն զուրկ ենք:

Սոր համար ամեն չարիքներ եկան
հասան մեր օրերը. որով տակաւին կեն-
դանի՝ մեր գիտկները կը տեսնենք:
Ս'եր քաջ նահատակները պատերազ-
մին մէջ ինկան, և սուրբ քահանաներ-
նիս ալ անօրէն ձեռքերէ սպանուե-
ցան, մեր գեղեցիկ երիտասարդները
մարթուեցան, և շատ կոյս աղջիկներ
ալ գերի եղան. փափուկ կոնայքն ալ
բութեան տառապանաց մէջ կը հեծեն:

և շատ որբեր ալ դառն արտասուեց-
կը թափեն: Այստեղեցին Հեթա-
նոսաց ծառայութեան տակ ընկաւ, և ա-
նոր սուրբ քահանայները անօրէն հար-
կահաններէն կը չարչարուին: Աղբիւն-
թիւնը աշխարհէն վերցած է, գթու-
թիւնն ալ մարդկանց մտաց մէջ տեղ
չունի: Արկինքը վերէն բարկացած է,
և երկիրն ստքերնուս տակ կ'երերայ
ու կը տատանի:

Ս'եր չէնքերը մեզի գերեզման
դարձան, և մեր ձեռաց վաստակնե-
րը մեր վերայ տապալեցան. երկրիս
թանձրութիւնն ալ պատռելով, շատ մար-
դիկներ անոր մէջ կորան: Արդին չըս-
պասաւորեց իւր հօրը, և ոչ քոյրը իւր
եղբորը աչքը զգուշացոյց չար ծանա-
պարհէ, ոչ ալ մայրերը իրենց զաւա-
կաց վերայ լացին. ըստ որում՝ սովը
անոնց բերանը բանալ չողուաւ:

Հզօրները ի իրանանու բարձր
մայրիներու նման խորտակեցան. բար-
կութեան հնձան դարձան, և խա-
ղողի նման ամենքն ալ ոտքի տակ ճրմ-
լեցան, գինիի տեղ՝ անմեղներու ա-
րիւնը ցատկեց մեր հանգերծին վերայ:
Ս'եր կերակուրը ամենատաափիկ լեղի
դարձաւ մեր քմացը, և մեր սուրբ բժ-
պիւնն ալ քոյցալս. վերաւորեալնե-
րուն հեռ մենք ալ հոգւով մարմնով
վերաւորեցանք, և մեռնողներուն հետ
մեռանք:

Այժմ, ոչ ապաքէն մեր ծուլութե-
պատճառաւ հասան այս ցաւերը երկրիս
վերայ: (Տ)ն հեռացիր այս աշխարհէս
դուսն ո՞վ միայնակեաց, դուսն որ շատոնց
բաժնուեր ես ասոր աղէտներէն, և
այս օրհնութիւնը քոյցալս աշխարհիս կե-
ղեւները վրայէդ թոթուելով՝ մէկ կողմ
նետէ. այո՛, այո՛, մերկայիր բմբիւն պէս,
օճէ քու անձդ՝ Վրիստոսի իւղովը, որ
պէս զի օրհնեանիդ ձեռքը քու վրադ
չդրից: Իսկ սրդ՝ թէ որ հեթանոսնե-

քը լոկ տեսական իմաստութեան պա-
րագելնուն համար ոչ միայն սոսոյց-
ուածնեքէ՛ այլ և օրինաւոր կերակուր-
ներէ հրաժարելով՝ պարզ, բիշ և ան-
պաճոյճ ընկելներով բաւականա-
ցան, և իրենց կեանքը առաքինի մահ-
ուամբ վերջացուցին . մենք միշտի
աւելի պարտաւոր ենք Վրիստոսի սիրե-
լիներուն նմանիլ, որոնք հրեշտակոց
կրօնքն ընդունեցին և երկնաւոր զօրաց
դասը խառնուեցան : Լիկէք ո՞վ միայնա-
կեացներ, եկէք եկէք մենք ալ մեր սոսոյց-
ուածոց թշնամի ըլլալով, ոչնչացունենք
զանոնք իրեւ օտար երկիր . եկէ՛ք, այս
թշնամիին ծառատունկները իրեւ
դերի նեղեալներուն ծախենք . չեթէ
ազգականներին ատելով, այլ ազգաւ
ները աւելի սիրելով, որոնք Վրիստոսի
զօրականներ և ճշմարիտ բարեխօսներ
են : Ապա եթէ դու այս սեղ. քու ստա-
յունածոյդ հետ կր կապուիս, դուն զքեզ
անդարձ գերութեան կը մատնես . ուր
ամենեւին ազատութե գին չկայ . ասդա
և ոչ ազատութիւն . փոյթ ըրէ՛ եղ-
բայր, փոյթ ըրէ՛, չուտ ըրէ՛ որ այն
անողորմ գեհնէն օտարի և կարենաս
ամուր քաղաքը հասնիլ, ուր գերի
ըլլալու կասկած կամ երկիւղ մը ամե-
նեւին չը կայ :

Ըրդ, թէ որ հարց գեղեցիկ վար-
դապետութեան հետեւիս, որոնց՝
(այսինքն այն սուրբ միայնակեացներուն)
վոյսք բիշ մը յառաջ խօսեցայ, այն
ատեն կարող ես դու առանց ակտա-
ւոր չարարանքներու մտադր աչքերը
վերցնել և զքեզ բոլոր երկինքէն բար-
ձրը տեսնել : Այն ատենը յիշաւի ե-
րանի պիտի տաս անձիդ այս աշխարհիս
վշտակց կեանքէն՝ բարութե ազատե-
լուդ համար . այն ատենը միայնակեաց
ներուն երամին, նք արդարաց գնդին,
սուաքերոց վիճակին, մարտիրոսաց
խուամբին, հրեշտակաց բանակին և

անդրանկաց ժողովին ընկերակից պիտի
ըլլաս երկնից մեծ քաղաքին մէջ աբրա-
համաններու հետ բազմելու, եր-
կնաւոր կերակուրներ ուտելու և ան-
կարօտ ըմպելիներ խմելու համար :
Այնուհետեւ այն մարգարէն դու ես,
որ թէպէտ այս մարմնաւոր աշխարհին
մէջ չպատուեցար, սակայն թե երգ բա-
ցած անմարմին աշխարհը թաւար, և
անսպական ուրախութեանց մէջ հան-
գըստանալով, հոն բնակութիւն հաս-
տատեցիր :

Օր՝ մենք մեր վերջին գրքովը աշ-
խատողներս ալ կը փափագինք մեր
սուրբ ուխտին միաբանութեան հետ
միասին փոյցելել մեր Յիսուս Վրիս-
տոս Տիրոջ շնորհիւ, որուն միշտ
և հանապազ փառք կուտանք :

Յակոբ Յովնէս Անուշանց
Պօլեցի :

ՎԵՐԱՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Անցեալ թուով խնայուցած էինք
քաղաքիս արքունի զօրաց հրամանա-
տար ի իւր փաշայի իւր ծերութեան
պատճառաւ պաշտօնէն հրաժարելն
ու Ղաժմասիսի մէջ իւր կենաց մնա-
ցորդը հանգստութեան մէջ անցընե-
լու համար ասկէ մեկնիլ : Յիշեալ
փաշային յաջորդեց անմիջապէս նոյն
քաղաքի զինուորական հրամանատար
Վսեմ . Իսանք Սնատաֆա փաշայն,
որ ներկայ ամսոյս սկիզբները հասաւ
քաղաքս և սովորական յարգանքը ըն-
դունուեցաւ : Վանի մի աւուր յե-
տոյ Ամիրապատիւ Սրբազան Պատրի-
արքը նորին Վսեմութեան տեսու-
թեան երթալով, ամսոյս 19ին բարեհա-
ճեցաւ ինք եւս փոխադարձ այցելու-
թիւն ընել :

— Վանի մի շաբաթէ ի վեր քաղա-
քըս կը դռնուի նաեւ Արշիտուքա

Յրանչեպօն Լատորիոյ, որ էր նախորդ դուքս Ստեփանայի և Նկերակից են իւրեան՝ եղբորը ծաղկահասակ որդին Լէֆոնսոյ տը Պորպօն . Լուիճի Լն ճեղինի, որ է բժիշկ Լատորիոյ բանաւ կին մէջ և նոյն պաշտօնիւ ընկերաւ ջած է նորին արքայական բարձրութեան, և Ղիուլը Պուսսօի քահանայն Լմոյս 12 ին բարեհաճեցաւ այցելութեան գալ Լմենապատիւ Սրբապան Պատրիարքին, որոյ ընկերակցութեամբ մեծիւն անուցս գլխաւոր տեղերը պտորտելով և յատկապէս ի թանգարանն գալով, երկրորդ անգամ պատուեց զայն՝ իւր ստորագրութիւնը ղենելով Լայցեւոյց ցանկին մէջ . Լագալին գալուստն էր ի 14/10 մարտի, 1864 :

— Լմոյս 8 ին հասաւ ի սուրբ քաղաքս Լղէքանդրիոյ հռովմէադաւան (Յունաց ամենապատիւ Պատրիարք Ղրիզորիոս եպիսկոպոսը . Լյսպիսի դէպքերու մէջ սովորութիւն է ամէն քրիստոնեայ ազգաց կողմէն գիմառու ելլալ համար քանի մի անձինք խրկել . նմանապէս սուրբ Լթուոյս կողմէն վարդապետ մի հանդերձ ետախճի ուլ փութաց ի պատիւ Ղրիզորիոս պատրիարքին ընդառաջել : Քանի մի օրէն զկնի Լմենապատիւ Տ . Լսայի Սրբազան Պատրիարքը չքաւ նորին տեսութեան, և փոխադարձ այցելութեամբ եւս զիրար արժանաւոր մեծարանօք պատուեցին : Լմոյս 20 ին մեկնեցաւ Լղէքապօրիա : (Յիշեալ պատրիարքի իրաւասութեան տակն են Ղամասկոսի, Լնաիօբայ, Լիբաւ նանու և Լյուսաղէմի հռովմէադաւան Յայն ժողովուրդը :

— Լոյն օրը այսինքն ամոյս 20 ին մեկնեցաւ նաեւ Ստեփանայի նախորդ դուքս՝ բարձրապատիւ Յրանչեպօն արչիդուքան Լատորիոյ :

— Սուրբ Լթուոյս միաբանական տարին ներկայ ամոյս մէջ լրանալուն՝ յետագայ պաշտօնախօսութիւններն տեղի ունեցան . Լրժանապատիւ Թադէոս վարդապետ նախորդ հիւրընկալը՝ սուրբ Ննդեան վանուց տեսուչ կարգեցաւ փոխանակ Լրժ . Լիրակոս վարդապետին, որու յանձնուեցաւ սուրբ յարութեան Տաճարի տեսուչութիւնը . Պերութի Լրժ . տեսուչ Ղեւորդ վարդապետը Ղամասկոսի եկեղեցւոյ տեսուչ անուանեցաւ, և իւր տեղը յաջորդեց Սարգսայի Լրժ . Սարգան վարդապետը, իսկ Ղամասկոսի նախորդ տեսուչ Լրժ . Թաճեալ բաւ վարդապետը ի նր Լթուս կրուպատիւ : Յայպէի և Լէմէի տեսուչութեց փոխիստութիւն չեղաւ, որոնց առաջինը Լրժ . Լթանաս վարդապետին և երկրորդը Լրժ . Խորէն վարդապետին յանձնուած են : Ղարեկայի Լրժ . Թումա վարդապետին յանձնուեցաւ սուրբ Փրկչի վանաց և սուրբ Լսառուածանի գերեզմանի Տաճարին Տեսչութիւնը փոխանակ Լրժ . Լղիւէ վարդապետին՝ որոյ յանձնուեցաւ մոմխանէի տեսչութիւնը : Իսկ հիւրընկալութեան պաշտօնը յանձնուեցաւ Սանեցի Լրժ . Սեպուղ վարդապետին :

— Սուրբ քաղաքէս մինչեւ ի Յայպէ եղած ճանապարհին շինութեան վերայ քանի մի անգամ յիշատակութիւն ըրած եմք ամասթերիի մէջ, որոյ կարեւորութիւնը քանի մի տարիէ ի վեր խիստ զգալի եղած էր Լարոպայի երեւելի անձանց յաճախելուն պատճառաւ, և արդէն տարի մի է որ սկսուած է շինութիւնը, և անպետ ամի բարեպաշտ ուխտաւորաց բաւական զիւրութիւն տուաւ : Լինչպէս որ յայտնի է, շինութեան ձեռնարկուած օրէն ի վեր խօսք կ'ըլ-

լար նաեւ ճանապարհորդաց . աւելի
գիւրութեանը համար կառքերու եր.
թեւեկութիւն հաստատել, օրինակ
առնելով Պէրութէն մինչեւ ի Ղա.
մասկոս գնալիք ճամբուն նորութիւ.
նը . Սոյն խորհրդակցութիւնները այս
օրերո իրական կերպարանք մի ըստա.
ցան . տեղւոյս վսեմափայլ Փաշային
հաճութեամբն ընկերութիւն մի յա.
տուկ հաստատուեցաւ , և քանի մի
անգամ ժողովք ընելով իրենց ձեռ.
նարկելի գործոյն սուրապիձն յօրինե.
լով և հանդերձ խնդրագիրով տեղ.
ւոյս կառավարութեան միջոցաւ Ղա.
մասկոսի միւշիւր վսեմափայլ Սէհէմ
մետ խճէտ Փաշային ուղարկեցաւ ,
խնդրելով որ Բարձրագոյն Իսկէն հը.
րամանապիր բերել տալու շնորհք ընէ :
Ինկերութիւնը որոշած է , որ եթէ
Ի . Ղուսը իւր պայմանները ընդու.
նելով տասը տարուան համար արտա.
նագիր շնորհելու ըլլայ , անմիջապէս
գործի սկսի Բ Լ : և կը յուսամք որ բա.
րեխնամ Տէրութիւնը , որ իւր երկրին
ամէն մասամբ ծաղկելուն և բարգա.
ւաճելուն մեծ հոգ և ջանք միշտ ցոյց
տուած է , պիտի բարեհաճի այսպիսի
օգտակար ընկերութեան մի ինդիլիդ
և պայմանները սիրով ընդունելով
գործադրութեան մասին խրախոյս ևս
տալու : Ինկերութիւնը 400 բաժին
որոշած է , ամէն մէկ բաժին ստա.
նական օսմանեան լիւրայ , որ կ'ընէ 4000
լիւրայ . սոյն գումարով պիտի հոգաց.
ուին հարկաւոր ծախքերն ու տեղ տեղ
կայարաններ պիտի շինուին : Տասը բա.
ժին գումարը իրաւունք պիտի ստա.
նայ ամսականով որ և իցէ պաշածն մը
վարելու ընկերութեան մէջ . և գըր.
սէն ոչ որ պիտի ընդունուի գործավա.
րութեան համար :

— Դրո՞ւր . Օ միւռնոյ սուրբ Ստե.
փանոս եկեղեցւոյն արժանապատիւ

Տէր Կարապետ քահանայն Տէօբմէ.
ձեան սուրբ Աթուոյս Թանգարանին
նուիրեց երկու ձեռագիր մատեան .
առաջինն է Եօսէմիլլիի հանգուցեալ
Տէր Պողոս քահանային բանաստեղ.
ծական երկասիրութիւններն հայերէն
և տաճկերէն լեզուաւ , որու մէջ կը
պարունակին զանազան տաղեր , զգ.
սալի և իրատական երգեր . և այլն :
Երկրորդն է Յովհաննու աւետարան
ըն Յայտնութեան գրոց մեկնութիւ.
նը համառօտ և պարզ ոճով Յովհան.
նէս անուն բանասիրի մի աշխատասի.
րութեամբ գրեալ ի Օ միւռնիա յամի
1825 . Սոյն երկու գրքերը Լրժանա.
պատիւ քահանայն իւր հանգուցեալ
բարեպաշտուհի եւ ծաղկահասակ
երէցինոջ համար յիշատակած է :

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍԻՐԵԼԻ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ԵՂԲԱՅՐ

Ըստ տնօրէնութեան Վեհափառ Սահմանադրութեան
տնայնէն Հոյոց Տ . Տ . ԳԵՐՈՒԳԱՅ , Սինօգա Մայր
Աթուոյս սրբոց Էջմիածնի պարտ համարի աղգ.
առնել Չերուժ Սիրութեան , զի յառաջիկայ ամ.
սեան սեպտեմբերի ներկոյ ամի 'ի 29 երրորդում ա.
ւուր 'ի տնի վարագոյ սուրբ Խաչի ունի լինել օրհ.
նութիւն սրբալոյս Միւռնոյն ըստ Ժիւրի Հայաստա.
նեաց սրբոց Եկեղեցւոյ :

Ուստի Ատեան Սինօգիս խնդրէ 'ի Ձեռն ,
շնորհ առնել հրատարակել զայն 'ի գիտութիւն հա.
մայն Հայազնեից վեճակից հոգեւորականաց և աշ.
խարհականաց , որպէս զի ցանկացողք 'ի նոցանց
հանգիստաւս գտանիլ շնորհաբաշխութեան օրհնու.
թեան Իւղոյն Սրբութեան , շնորհաբեր լինին 'ի նը.
շանակեալ ժամանակին 'ի սուրբ Աթուոս , ըստ
պանծայի օրինակի բարեյշխատակ և ջերմեռանդն
նախնեաց մերոց :

Ի 8 Ապրիլ 1868 ամի . ի սուրբ Էջմիածնի համար 555

ԱՄԴԱՄԻՔ ՍԻՆՕԴԻ

Ընդոյս 28 ին . սրբոց Ղալիանեանց
կուսանաց սօնախմբութեան օրը կա.
տարուեցաւ վայելուչ հանդէս տեղ.
ւոյս Հայ օրհորգաց վարժարանի մէջ .
որ Ղալիանեանց անունը կը կրէ : Հանգ.

դիւին ներկայ էին Մենասպարհ Սրբազան Պատրիարքը եպիսկոպոսով և վարդապետներով հանդերձ, և աշակերտուհեաց ծնողքը և աղագականքը : Ըշակերտուհիներէն (որոց թիւը յիսուներկը հասնի,) չորս օրիորդներ ճառեր կարդային և իւրաքանչիւր ճառի կարդացումէն առաջ երգութեան զանազան աղագային սրտաշարժ երգեր, որք կը յիշեցնէին մայր Հայաստանի քաղղը յիշատակները և նախնեաց հայրենասէր սիրազործութիւնները : Իսկ ճառերու պարունակութիւնն էր գլխաւորապէս օրիորդաց դաստիարակութեան, ծնողական, պարտուց և Վայխանեանց յիշատակին վերայ : Սուրապի էր լսել օրիորդաց գրէն և բերնէն այն սրտաւորութիւնները, որ իրենց սեռին կը պատկանի : Եթէ ներկայ հայութիւնը կանանց կրթութեան նկատմամբ տակաւին իրական յառաջդիմութիւն չունի, գոնէ այս եւս մեծ մխիթարութիւն է, որ տեղ տեղ Հայ օրիորդները սկսած են խորհիլ և խօսել այն ամենահարկաւոր նիւթերուն վերայ, որ իրենց մայրերուն բոլորովին անձանթ էին : Եւս առաջդիմութեան քայլ մի կը համարենք մենք այս շարժումը, երբ որ կը տեսնենք որ իգական նոր սերունդը սկսած է իրեն սեռի պարտքերը յեղ-յեղել : Հարկաւ նորա մայրեր դարձած ժամանակը նոյնը գործով պիտի կատարեն և իրենց հոգացողութեան առաջին փայլը իրենց որդւոց դաստիարակութեան համար գործադրեն, որով և անտաքակոյտ կարենք լինիլ, որ դաստիարակութեան խնամածու մայրեր ունենալէն զին՝ պիտի ունենանք հայութեան կրթութեամբ նոր սերունդ և հետեւապէս աղագային յառաջդիմութիւն մարդկութեան յառաջնադաս ատպարիղին մէջ :

Ըշակերտուհեաց ճառերու աւարտումէն յետոյ Մեք. Պատրիարք Հայր խրատական յորդոր խօսեցաւ ծընողաց, որ իրենք եւս հսկեն օրիորդաց բնասանեան կենաց վերայ, որ պէս զի ի գուր չանցնին Ս. Ըթուոյս խնամքները, օրհնեց Գգը, Ըթուը, դպրոցները, դաստիարակները, և յատկապէս յայտնեց իւր շնորհակալութիւնը Ըթ. Տեսուչ Սիրոյի վարդապետին, Օմիւսնացի Վառվառէ պարկեշտասուն Վարժուհի օրիորդին, և ուսուցչաց ու աշակերտուհեաց : Նորին Սրբազնութեանը ձայնակցեցան և հանդիսականք շնորհակալութիւն մատուցանելով աշխատաւորներուն : Սրբազան Պատրիարքը իւր յորդորական խօսքը աւարտելէն և ամենուն օրհնութիւն տալէն յետոյ, ներկայ հանգիսականաց հետ սկսաւ աշակերտուհեաց ձեռագործները աչքէ անցնել, որ մեծ սեղանի վերայ կարգաւ շարուած էին, գործողներու աշունները վրան դրօշմած : Ես ունինք, որ եթէ անցեալ տարի 250 ձեռագործ վիճակահանութեան ելաւ, այս տարի կրկնապատիկը պիտի լինի, որ մեծ պարծանք է մասնաւորապէս Վարժուհի Զննասէր օրիորդին :

Թիֆլի վիսպագրոյ օրինակ :

Մենասպարհ Սրբազան Հայր : Կէլիպօլւցի Սարգիս Գրիգորեան և Ընտոյի Եարութիւն Սանդկեան տղայք տեսայ և ըստ բժշկական օրինաց քննելով կը վկայեմ որ ոչ ներքին և ոչ արտաքին հիւանդութիւն մը ունին և արատաւորութիւն մը ալ չունին, ամեն կազմերն ալ աղէկ ըլլալով մենք ալ արժանաւոր կը դատովմէ ժառանգաւորաց դպրոցի աշակերտուէ :

1868 Մայիս 6

-Երուսաղէմ :

Նախապետ Սահակ Քիմազմեան :

Բժշկ. Ս. Ըթուը :

Երուսաղէմ :

Գալաթական Եպիսկոպոսն աղաւ ։
Եւսայեան մանտեոյ Եսկոր աղաւ ։
Զորայեան Մինաս աղաւ ։
Էլիմասն Գերբոյ աղաւ ։
Հարաբարձեւան մանտեոյ Փ ։ Գալաթաց աղաւ ։
Է Էրզընկայի (Պաշլուք) ։
Համարախոսան Ստեփան աղաւ ։
Ս ։ Էրզընկան խաչատուր աղաւ ։
Մալաթիան Եսկոր աղաւ ։
Մեդայեան փարձարան ։
Յ ։ Էրզընկան խաչատուր աղաւ ։
Չիլիկիւրան Գրիգոր աղաւ ։
Չեմէնէան Բարսէղ աղաւ ։
Չիլիկնան Եսկոր աղաւ ։
Պաշլուքայեան Ղուկաս աղաւ ։
Պաշլուքայեան Պաղատար աղաւ ։
Պաշլուքան Մատթէոս աղաւ ։ (Յ օրինակ) ։
Սաւաթանայ Ղանիկ աղաւ ։
Սըփանէան Եպիսկոպոսն աղաւ ։ (Փան Արշակունեան
փարձարանին Ագրիանուպոլսոյ ։
Սուրբանէան մանտեոյ Գերբոյ աղաւ ։
Սարգսյանէան մանտեոյ Եւաղուս աղաւ ։
Վարպեան Եսկոր աղաւ ։
Տամաշեան Եպիսկոպոսն աղաւ ։
Տամաշեան Սարգիս աղաւ ։
Տէտեկան Եսկոր թիւն աղաւ ։
Տէր Փիլիպպոսն Մարտիրոս աղաւ ։
Փափայեան Եսկոր թիւն աղաւ ։

ԷԶՄԻԱԾԻՆ

Տ ։ Տ ։ ԳԻՌԳԻ ՎԵՆԱՊԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ (2 օր) ։
ԳԵՐ ։ Անդրեան Եպիսկոպոսն ։
ԱԺ ։ Բ ա ճ է ո ս փարգապեան Չիլիկան ։
" Սարգիս փարգապեան տէր Գալաթիան ։
" Գրիգոր փարգապեան Մաշեղան ։

ԹԵՔՐԻՍԱՂ

ԳԵՐ ։ Թադէոս Արքայան Արքեպիսկոպոս քարեխը-
նամ Աւաշնորդ ։
Տ ։ Արիստակէս քահանայ Ֆեպեան ։
Տ ։ Վ Ր Յ Ա Ն Ե Ս քահանայ ։
ԳԵՐԳՈՐ Ե ԱՆՏԵՆԻ ՏԵՐԻԿ աղաւ ։
Փիլիպպոսն մանտեոյ Եսկոր աղաւ ։

ԹԻՖԼԻՉ

ԳԵՐ ։ Մովսէս Արքայան Արքեպիսկոպոս Աւաշնորդ
Վրաստանի Կ Ե Ս Ե Ր Ե Ր Ի ։
ԱԺ ։ Ս Ե Ք Յ Ո Ս փարգապեան Պաշլուքն ։
Տէր Խաչակ աւագ քահանայ Սահաւաճի ։
Տէր Մովսէս աւագ քահանայ Սարգիսն ։
Տէր Սիւրբէլ աւագ քահանայ տէր Գրիգորն ։
Տէր Եպիսկոպոսն աւագ քահանայ Օրբելիան ։
Տէր Ղազար աւագ քահանայ Դաւիթն ։
Տէր Եպիսկոպոսն աւագ քահանայ Արարատն ։
Տէր Սրայիւն աւագ քահանայ ։
Տէր Գրիգոր քահանայ տէր Բարսէղն ։
Տէր Թադէոս քահանայ Խօջանիսկան ։

ԼԱՅՈՒՆԻԿԻ

ԱԺ ։ Զաքարիա փարգապեան ։

ԽԻՐԱԼԻԻ

ԱԺ ։ Փետրոս փարգապեան Աւաշնորդան փոխ ։
Սաւաքեան Եսկոր թիւն աղաւ ։
Նաւեր Սեփանէան ընկերութեան Մանտեոյ Աւ-
ստանատուր աղաւ ։ Մանտեոյ Փեփանտեան ։

ԿԼԻՐԻ

ԳԵՐ ։ Եսկոր թիւն Արքեպիսկոպոս ։
ԱԺ ։ Մանրէ փարգապեան ։
Տ ։ Բաւաթարս քահանայ Դ Ս Ր Ե Ր ։
Տ ։ Գրիգոր քահանայ Տ ։ ԱՆՃԱՆՈՐԵՆԻ ։
Արքեպիսկոպոսն Փետրոս աղաւ ։
Բարսէղաթաւ աւագապետն Արձնեան ։
Պաղատայեան Եպիսկոպոսն աղաւ ։
Եւսայեան մանտեոյ Փիլիպպոս աղաւ ։
Էնք / Լ Ի Կ Ե Ս Ա Ն Ե Ր Ե Ր ։

Էնքիճեան Սարգիս Էնքիճեան ։
Հաճարախոսան մանտեոյ Սիւրբէլ աղաւ ։
Կարպեան մանտեոյ Եսկոր թիւն աղաւ ։
Հաղարապեան մանտեոյ Արարատն աղաւ ։
Մանտեոյ Կարպեան Եսկոր թիւն աղաւ ։
Մարգարեան Կարպեան աղաւ (Եսկոր) ։
Մաշեղեան Եսկոր թիւն Էնքիճեան ։
Եսկորն Գերբոյ աղաւ ։
Եսկոր թիւն Սիւրբէլ աղաւ ։
Եսկոր թիւն Եսկորն աղաւ ։
Եսկորն Եսկորն Սիւրբէլ աղաւ ։
Նշան աղաւ Էրզընկայի (Փարձարան) ։
Զաւարապեան Եպիսկոպոսն աղաւ ։
Պաշլուքն Սիւրբէլ աղաւ ։
Պետրոս աղաւ Էրզընկապետի ։
Սարգիսն Գաւաթի աղաւ Գալաթ ։
Սարգիսն Սարգիս աղաւ Գաւաթի ։
Տէր Եպիսկոպոսն Եսկոր թիւն Էնքիճեան ։
Տ ։ ՄԷՐԻՔԻՆԻԿԻՆԵԱՆ մանտեոյ Եսկորն աղաւ ։
Փանտեան խաչատուր աղաւ ։
Փանտեան Եսկորն աղաւ ։

ԿԵՍԱՆԻՐ

ԳԵՐ ։ Կարպեան Իրրապեան աղաւ Եսկորն
Ս ։ Գաւաթի փոխաւ ։
ԳԵՐ ։ Երզն Ծ ։ փարգապեան քարեխնամ Աւաշնորդ ։
Թանգարանն Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։
Թանգարանն Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։
Թաւաթ քարապի Իրրապեան Եսկորն աղաւ ։
Նուեր ԱՆՃԱՆԻՆ Եսկոր աղաւ ։

ԿԵՅԼԵ

Արման Զաքարոս աղաւ ։
Գրիգոր աղաւ Պաշլուքն Վարպեան ։
Երանայ Աւաթի աղաւ ։
Երանայ Եսկոր թիւն աղաւ ։
Էրման Գ Ե Ր Ե Ր Ե Ր ։
Կարպեան Եպիսկոպոսն աղաւ Թարսան ։
Եպիսկոպոսն Սարգիս աղաւ ։
Բաւաթեան մանտեոյ Դաւիթ աղաւ ։
Երզն աղաւ Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։ (Փարձարան) ։
Բեփանէան մանտեոյ Եսկոր աղաւ ։

ԿԻՊՐՈՍ

ԱԺ ։ Դաւիթ փարգապեան ։
Սարգիս Կարպեան ։
Մարգարեան Եսկոր աղաւ ։
Մէլիքեան Մէլիքեան աղաւ ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՆՆ ։ Տ ։ Տ ։ ԳՈՐԱՍ Արքայան Պաղատար (2 օր) ։
ԳԵՐ ։ Արարատն Արքեպիսկոպոս Եսկորն աղաւ ։
" Արիստակէս Եպիսկոպոս ։
" Գրիգոր Արքեպիսկոպոս Արարատ ։
" Սիւրբէլ Արքեպիսկոպոս ։
" Եպիսկոպոսն Արքեպիսկոպոս Պաղատար ։
" Ներսէս Եպիսկոպոս Վարձարան ։
" Ներսէս Եպիսկոպոս Պաշլուք ։
" Եպիսկոպոսն Կարպեան Արձնեան ։
ԱԺ ։ Արձնեան փարգապեան Բաւաթ ։
" Բարսէղեան փարգապեան Պաշլուք ։
" Գաւաթի փարգապեան Բաւաթ ։
" Գրիգոր փարգապեան Արարատ ։
" Խաչակ փարգապեան Գաւաթ ։
" Կարպեան փարգապեան Գաւաթ ։
" Եսկոր փարգապեան Բարսէղ ։
" Եպիսկոպոսն փարգապեան Տիգրան ։
" Պետրոս փարգապեան Գաւաթ ։

Տ ։ Ս Ե Ք Յ Ո Ս քահանայ Գալաթիան Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։
Տ ։ Գրիգոր քահանայ ԱՆՃԱՆԻՆ ։
Տ ։ Գրիգոր քահանայ Պաշլուք ։
Տ ։ Երզն քահանայ Սարգիս Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։
Տ ։ Մարգարեան քահանայ Եսկոր թիւն Էնքիճեան ։
Տ ։ Սարգիս քահանայ Սարգիս Կ Ե Ս Ե Ր Ե Ր ։
Արման Գրիգոր Էնքիճեան ։
Արման Գրիգոր Էնքիճեան ։

ՅԱՆԿ

Մ Ա Յ Ի Ս

Տարբերութիւն կրօնական Սխտութեան և Սխտեր- տութեան	97
Կարճ խորհրդածութիւն մը	103
Լճխատութիւն	105
Լա Հայրենիս Հառաչանք	109
Վիտորիաութիւն — Ղիլիէի յաղագոս Սիւննանց	111—112
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ . — Լանք Սուտաֆա Փա- շայն . — Լստրիոյ Լըշիդուքս Ֆրանչեսքո . — Ղի- լիսիոս Հռովմէադաւան Յունաց Լղէքանդրիոյ Պատրիարքի գալուստը . — Սուրբ Լեոնոյս Տեա- լաց փոփոխութիւնը . — Յուպէի ճանապարհի ընկերութիւնը . — Նուէրք . — Լճմիսնի Սինոդի չըջաբերականը . — Վայիսննեանց Վարժարանի հանդէսը . — Լրկու ժառանգացու աշակերտաց գալուստը	117—120

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՅԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 էրեսէ բաղկացեալ ութանալ թղթով.
- Բ. Տարեկան դէնն է երկու արծաթ Մէքիտիէ համալսարանի ծախ-
քովը, կանխիկ վճարել:
- Գ. Զատ տետրակ ունեն ռազլը, պէտք է ամէն մէկ տետրին չորս գա-
նեկան վճարել: